

31-32(533-534)  
24.11.2018  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուբին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՇ ԿԳՍ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԼՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Սիրելի՛ ուսանողներ

Ուսանողության միջազգային օրը շեշտում է ուսանողության կարևոր դերակատարումը յուրաքանչյուր երկրի կյանքում, քաղաքացիական հասարակությունների կայացման ու զարգացման մեջ:

Արցախի ուսանողությունն իր ամենակարևոր քննությունը հանձնել է ազգային-ազատագրական պայքարի տարիներին՝ կանգնելով Ղարաբաղյան շարժման կազմակերպիչների և առաջամարտիկների շարքերում:

Իրենց ուսանողական գրքույկը գեներով փոխարինած հայ երիտասարդները քաջ գիտակցում էին հայոց անկախ պետականության վերստեղծման և ազգային ինքնության պահպանման նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:

Այսօրվա հայ ուսանողությունը անկախության հետ ժառանգել է նաև մեծ պատասխանատվություն՝ ամեն գնով պաշտպանել հայկական երկու հանրապետությունները թշնամուց, սպառնալիքներից ու մարտահրավերներից:

Արցախի և մայր հայրենիքի մասնագիտական հաստատություններում սովորող բոլոր ուսանողներին շնորհավորելով ուսանողների միջազգային օրվա առթիվ՝ մաղթում եմ հետաքրքիր իրադարձություններով ու դրական հույզերով լի ուսանողական տարիներ, մասնագիտական կրթության մեջ առավելագույն արդյունքի հասնելու, ստեղծագործելու, երագելու և երագանքներն իրականացնելու կամք ու կարողություն:

### İ àÜÀ ²èÆĀ` Ð²Ø²ĒØ´ °Èàò àôê²ÜàÔÛ°ðÆÛ

Նոյեմբերի 17-ը աշխարհի շատ երկրներում նշվում է որպես Ուսանողների միջազգային համերաշխության օր: Ամսաթիվն ընտրվել է 1996 թ. Եվրոպայի Կոնգրեսի կողմից, որի նպատակն էր համապատասխանեցնել և իրականացնում է քաղաքականություն, որի հիմքում ընկած է երիտասարդությունը և հատկապես նրա առաջատար սերունդը սովորող երիտասարդությունը՝ ուսանողությունը:

Արցախի պետական համալսարանում այս ներածականով բացելով օրվա կապակցությամբ հրավիրված հանդիսավոր նիստը՝ պրոռեկտոր Վիտյա Երամիշյանն ասաց նաև, որ այս միջոցառումը նպատակ ունի մեկ անգամ ևս կարևորել ուսանողների դերակատարությունը, որոնք իրենց գործունեությամբ, ուսումնական առաջադիմությամբ, հասարակական ակտիվությամբ, ամենատարբեր միջոցառումներին ընդգրկվածությամբ, խոհեմ և ճիշտ պահվածքով ապահովում են Արցախի մայր բուհի արդյունավետ գործունեությունը:

ԱրՊՀ ղեկավարների, պրոֆեսորադասախոսական կազմի և մյուս բոլոր աշխատողների ամուսնից տոնի կապակցությամբ ուսանողներին շնորհավորեց ղեկավար Արմեն Սարգսյանը՝ նշելով, որ ուսանողների միջազգային օրը գեղեցիկ տոն է ոչ միայն նրանց, այլև ողջ հանրության համար, քանի որ չկա գերդաստան, որն ուսանող չունենա: «Այսօր առավել քան երբևէ կարևորվում է կայուն արժեքահանակարգ ունենալ ուսանողի դերը մեր հանրապետության և պետականաշինության կայացման ու զարգացման գործում: Ինչպես աշխարհի բոլոր բուհերը, այնպես էլ ԱրՊՀ-ն այսօր կանգնած է մի շարք մարտահրավերների առջև, առաջին հերթին՝ կապված աշխարհաքաղաքական իրողությունների, ժամանակաշրջանի ներկայացրած պահանջների և այլ հանգամանքների հետ, և այդ մարտահրավերները յուրաքանչյուր համալսարան կարող է լուծել ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմի, նրա մյուս աշխատողների, այլև առաջին հերթին ուսանողների օժանդակությամբ»,- ասաց ղեկավարը՝ հանգումը հայտնելով, որ ԱրՊՀ շրջանավարտները, ներկա և ապագա ուսանողները կանեն իրենցից կախված ամեն ինչ մարտահրավերները հաղթահարելու, մայր բուհի համար փայլուն ապագա ստեղծելու գործում: Ընդամենը մեկ ամսից քիչ ավելի նեկտորի պաշտոնում գտնվող Արմեն Սարգսյանն զգացել է ուսանողների, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, ֆակուլտետների աջակցությունը:

ԱրՊՀ ղեկավար Ա. Սարգսյանը պարզապես «Լավագույն ուսանող», «Լավագույն բանաստեղծություն», «Լավագույն գեղանկար», «Լավագույն լուսանկար», «Լավագույն

թղթակից», մարզական մրցույթներում, հնտելեկտուալ խաղերում հաղթող ճանաչված, ուսումնական, գիտական ասպարեզում բարձր ցուցանիշներ, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին: ԱրՊՀ «Տարվա լավագույն ուսանող» է ճանաչվել ուսանողական խորհրդի նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Խաչատրյանը և ներկայացվել մրցույթի հանրապետական փուլին: Նա, ինչպես և մրցույթի երեք անվանակարգերում հաղթած ուսանողները պարգևատրվել



են պատվոգրով և խրախուսվել դրամական պարգևով: Ընդհանուր առմամբ, շուրջ 70 ուսանող տարբեր ոլորտներում ունեցած ձեռքբերումների համար պարգևատրվել է գրքերով և պատվոգրերով:

Շնորհակալություն հայտնելով բարձր պատվի արժանակն համար՝ Դիանա Խաչատրյանը նշել է այն կարևոր նախապայմանները, որոնք անհրաժեշտ են լավագույն ուսանող ճանաչվելու համար. ուսման մեջ բարձր առաջադիմություն, մասնագիտական ձեռքբերումներ, հասարակական բարձր ակտիվություն: Նա խորհուրդ տվեց հասակակիցներին վայելել ուսանողական տարիները, քանի որ դրանք նրանց ամենավաճառելի են, բայց և չմոռանալ ուսանողի գլխավոր նպատակը՝ սովորել, և երաշխավորված կլինեն մասնագիտական ձեռքբերումները:

Պարգևատրվածներից «Լրագրություն» բաժնի ուսանողուհի Շողեր Սարգսյանն ընկերներին մաղթեց չընկճվել ուսանողական կյանքում հանդիպող խոչընդոտներից: Վստահեցրեց, որ ԱրՊՀ ուսանողները մշտապես ֆակուլտետի և բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են, և ուսանողի կողմից արձանագրված յուրաքանչյուր հաջողություն նրանց կողմից արժանանում է խրախուսանքի ու գնահատանքի, որը ոգեշնչում է ուսանողին:

Վերոհիշյալ պարգևներից և նվերներից զատ՝ բուհի կողմից այլ խրախուսումներ էլ

եղան: ԱրՊՀ ղեկավար Ա. Սարգսյանն ասաց, որ Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան դրամատիկական թատրոնի ներկայացումները դիտելու նպատակով համալսարանի շուրջ 450 ուսանողի համար տոմսեր են պատվիրվել, ինչպես նաև առաջիկայում նրանց սպասվում են արշավներ: Լուրջ աշխատանք է տարվում ուսանողների շարժունակության գործընթացն ակտիվացնելու ուղղությամբ. լավագույններին հնարավորություն կտրվի որոշակի ժամկետով սովորել արտերկրի և ՀՀ բուհերում:

Ա. Սարգսյանն ուսանողական ակտիվի ուշադրությունը հրավիրեց առաջիկայում սպասվող մեծ իրադարձություններին՝ Որակի



ապահովման միջազգային կառույցի կողմից համալսարանի հավատարմագրմանը, նախապատրաստությունը Արցախի մայր բուհի 50-ամյակին, որը լրանում է 2019 թվականին: «Իսկ սա նշանակում է ոչ միայն արժևորել 50 տարվա ընթացքում մեր ձեռքբերումները, այլև ներկայանալ այնպիսի ծրագրով, ինչը հնարավորություն կտա հիմնավորել, որ, ինքը, արժանի ենք 50-ամյա բուհի ձեռքբերումներին»,- ասաց Ա. Սարգսյանը:

Օրվա երկրորդ կեսին ԱրՊՀ ուսանողական ակտիվի բուհի ղեկավարության առաջարկ-նախաձեռնությամբ ընդունել է ԱՀ պետ-նախարար, ԱրՊՀ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանը: Շնորհավորելով ուսանողներին տոնի կապակցությամբ՝ պետ-նախարարը մաղթել է նրանց ուսումնական հա-

ջողություններ՝ կարևորելով նմանօրինակ հանդիպումներն ու ուսանողների արտաբուհական ակտիվությունը: Պետնախարարն ըստ ոլորտների ներկայացրել է Արցախի տնտեսության ներկա կացությունն ու առաջընթացը:

Գ. Մարտիրոսյանը պատասխանել է ամենատարբեր թեմաների վերաբերող ուսանողների հարցերին՝ սկսած ԱրՊՀ շենքային պայմաններից և լաբորատոր վերագիմումից մինչև երիտասարդական նորարարական բիզնես-ծրագրերի ու արտերկրյա ուսումնառության պետական խրախուսում:

Հանդիպմանը ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանը:

Ուսանողների միջազգային օրը յուրովի են նշել Արցախում գործող մյուս բարձրագույն և միջին մասնագիտական և արեստագործական ուսումնական հաստատությունները:

ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության նախաձեռնությամբ Շուշիի «Եգիպտոս» արհեստագործական ուսումնարանը վերածվել էր հանրապետությունում գործող ուսումնական հաստատությունների ուսանողների աշխատանքների ցուցադրման հարթակի, որտեղ կազմակերպվել էր «Ուսանողները՝ ուսանողների համար» խորագրով ցուցահանդես-վաճառք:

Ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ՄԵՀՁ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, բուհերի և կրթական այլ հաստատությունների ներկայացուցիչներ, ուսանողներ:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը ներկայացրել էր տարբեր քսուկներ, եթերա-յուղեր, պահածոներ, հյութեր, կոմպոտներ, ջեմեր, մուրաբաներ, չրեդեն:

Միջոցառման մշակութային մասն ապահովել են Շուշիի Նարեկացի արվեստի միության սաները, Արցախի պետական, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսանողները՝ ներկայացնելով երգ, պար, ասումներ:

Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորանքներ են հղել ԿԳՍ և ՄԵՀՁ նախարարները՝ նշելով, որ երկրի ապագան ու հիմնասյունը նոր սերունդն է և գոհունակություն հայտնել ուսանողներին ցուցահանդես-վաճառքին նման աշխատանքներ ներկայացնելու համար:

Առաջարկվել է մոտ ապագայում Շուշիի տեխնոլոգիական համալսարանում անցկացնել «Բաց դռների օր» և ծանոթանալ բուհի գործունեությանը, ուսումնագիտական և գիտափորձական լաբորատորիաներում տարվող աշխատանքներին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»











ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՅՏ

ՀԻՇԵՆՔ ԲՈՒՈՐԻՆ՝ ԱՆՈՒՆ ԱՌ ԱՆՈՒՆ

Արդեն 30 տարի է անցել այն օրերից, և մենք մեր հոգու ծալքերում փորձում ենք թաքցնել սարսափելի, դժնդակ այն ժամանակները, որոնց ականատեսն էինք ու կենդանի թիրախը թշնամու համար:

Փորձում ենք մոռանալ, որ բնավեր թռչուն էինք դարձել, քանզի ի վերուստ հային բաժին հասած համառության ու հաստատականության, ճակատագրական պահերին բռունցք դառնալու շնորհիվ նոր բույն ենք հյուսել կամ վերանորոգել, նոր շուք ենք տվել հներին ու շարունակում ենք շենացնել...

Այս ճանապարհին հերոսացավ մի ողջ ժողովուրդ, որն արյան գնով կարողացավ ծնկի բերել անարգ թշնամուն ու իր երկրում սկսեց դնել ազատ ու անկախ պետության հիմքերը:

30 տարի է՝ Արցախի ժողովուրդն արարում է իր պետականությունը՝ իր երկրի արժանավայել ներկայի ու բարգավաճ ապագայի գրավականը՝ աշխարհին հավաստելով պատմական ընտրության ճշմարտացիությունը:

Ազատությունն այս ձեռք է բերվել հայ ժողովրդի զավակների անօրինակ կամքի, համառության, քաջության, տոկունության, հայրենի երկրում ազատ ապրելու անհասանելի տենչի, բազում տանջանքների, տառապանքների ու նաև՝ արյան հեղեղի գնով:

Ամեն անգամ հիշարժան տոնի նախօրյակին, հետադարձ հայացք ձգելով անցյալին, մտովի վերապրում ենք այն դաժան օրերի իրադարձությունները, վերհիշում և Շարժման ղեկավարներին ու կազմակերպիչներին, անշուշտ, գլուխ խոնարհում նաև նրանց առաջ, ուն բախտ չվիճակվեց տեսնել իրենց գաղափարներն իրականացած, այսօրվա շեն ու բարգավաճող Արցախը...

Ուզում եմ թղթին հանձնել հիշողություններս նրանցից մեկի, որ հարազատ եղբայրս է, ճարտարի նախկին «Կոմունիզմ» կոլտնտեսության անասնաբույժ, նախկին մարզխորհրդի պատգամավոր Համլետ Պողոսյանի մասին: Նա բազում արժանիքներով օժտված բացառիկ անձնավորություն էր՝ մշտապես սիրահարված Արցախի օդ ու ջրին, սար ու ձորին: Քաջածանոթ էր հայ գրականության, պատմության ու մշակույթի արժեքներին, սիրում էր կարդալ ու արտասանել Թումանյան, Իսահակյան, Սևակ, շատ էր կարդում հատկապես նրանց հուշագրությունները, պաշտում էր հայ ժողովրդական երգը:

Ասել է թե՛ նրա յուրաքանչյուր օր սկսվում և ավարտվում էր հայով ու Հայաստանով: Ամենասուղ պայմաններում անգամ թերթերն ու ամսագրերը հայթայթում էր կապերով: Նրան հետաքրքրում էր Հայաստանին ու աշխարհի հայությանը վերաբերող ցանկացած նոր տեղեկություն: Բարձր էր գնահատում աշխարհի մեծերի իմաստասիրությունները: «Բանականության սիմֆոնիան» նրա սեղանի գիրքն էր, քանզի ողջ կյանքում դրանից կարելի էր սովորել...

Համլետ Պողոսյանն առաջին համարձակներից մեկն էր, որ մարզխորհրդի պատմական ստաշրջանում ելույթով հանդես եկավ Արցախին անկախություն շնորհելու պահանջով:

Նրա վերաբերմունքը մեր վաղեմի հարևանների ու վաղեմի թշնամիների նկատմամբ խորացել էր դեռևս Երևանում ուսումնառության հինգ տարիների ընթացքում: Ավարտելով ուսումը՝ երիտասարդ մասնագետն աշխատանքի է անցնում Շեխերի կոլտնտեսությունում՝ որպես անասնաբույժ: Կարճ ժամանակում նրա աշխատանքում նկատվում է առաջընթաց, և Մարտունու

կուստրոլյոմից նրան ուղարկում են Աղբեջանի Կենտկոմ՝ շրջանի կոմերիտը կոմի առաջին քարտուղարի պաշտոնում հաստատելու նպատակով: Բաբվում նրա հետ գրուցողը հայալեզու թուրք էր: Եվ երբ նրան հարցրել էր, թե ինչու է բացատրում, օրինակ, այն փաստը, որ իր գործունեության ժամանակահատվածում բարձրացել է կաթնապրանքային ֆերմայի կովերի կաթնատվությունը, նա առանց վարանելու պատասխանել էր. «Ֆերմայում մի քանի թուրքեր էին աշխատում, որոնք սիստեմատիկաբար գողանում էին անասնակերը: Ես նրանց ազա-



տեցի աշխատանքից և ուժեղացրի վերահսկողությունը բոլոր տեսակի աշխատանքների նկատմամբ»:

Նրան այդ ժամանակ որակեցին որպես «քաղաքականապես չհասունացած» և չհաստատեցին այդ պաշտոնում: Դա 60-ականներին էր...

Հետագայում աշխատանքի անցավ հայրենի ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսությունում՝ որպես գլխավոր անասնաբույժ և այդ պաշտոնում մնաց մինչև տնտեսության փլուզումը: Նրա գործունեության ընթացքում տնտեսությունը բազում հաջողությունների հասավ անասնաբուծության բնագավառում, իսկ հ.1 կաթնապրանքային ֆերման դարձել էր գիտահետազոտական աշխատանքների կենտրոն:

Համլետը հաճախակի լինում էր նախկին ԽՍՀՄ տարբեր վայրերում. անասնաբուծության վերջին նվաճումները հարազատ երկրամաս բերելու և դրանք տեղայնացնելու փորձ էր ձեռնարկում ու իրականացնում:

«Քաղաքականապես չհասունացած» որակումով այրն այդ իր ողջ գիտակցական կյանքում կատարել է հասարակական-քաղաքական բազում աշխատանքներ: Ամեն գրույցի պատեհ պահն օգտագործելով՝ հայոց պատմության դրվագների, Հայոց եղեռնի, Արցախի պատմության, ազգի միասնության անհրաժեշտությունը քարոզելու ժողովրդին:

Եվ երբ եկավ անհրաժեշտ պահը, այդ ամենը բացահայտ ու բարձր մակարդակով կատարեց: Նա կանգնած էր Արցախյան շարժման ակունքներում:

Հայրենի երկրի նկատմամբ ունեցած անսահման սերը Համլետ Պողոսյանը տարիներ շարունակ ներկայել է իր զավակներին՝ Հրայրիկ ու ժիրայրիկ, և ոչ միայն նրանց, այլև վաղաժամ մահացած եղբոր 4 արու զավակներին: Ու ամեն անգամ վեցին միասին ճանապարհում էր ռազմաճակատ՝ անընդհատ կրկնելով. «Ամենայն տեղ մահը մի է...»:

Քաջ գիտակցելով պահի լրջությունն ու ծանրությունը՝ հոգու խորքում իրեն հատուկ իմաստությամբ թաքցնում էր հուզմունքն ու անհանգստությունը:

Այդ վեցից երկուսը՝ 21-ամյա Հրայրն ու 17-ամյա Լորիկը, այդպես էլ չվերադարձան՝ հավիտյան զինվորագրվելով հայրենիքին...

Հոր պես բազմազան ու բազմակողմանի էին նաև Հրայրի հետաքրքրությունները: Արտակարգ ընդունակություններով օժտված սրամիտ պատանին աչքի էր ընկնում տարիքից անհամեմատ բարձր աշխարհայեցողությամբ: Դեռևս 10-րդ դասարանում հասարակագիտության ուսուցչի հարցին, թե՛ ինչ է սոցիալիզմը, Հրայրն առանց վարանելու պատասխանել էր. «Այսօրվա վրա դեռ ոչինչ»:

Իհարկե, նման պատասխանի համար նա կրեց իր «պատիժը» և հասունության ատեստատի գերազանց գնահատականների կողքին վաստակեց միակ «4»-ը: Սակայն այդ «4»-ը դարձավ նրա անհատականությունը հաստատող ևս մի հաստատուն փաստ:

Ուսանող էր Հրայրը, երբ սկսվեց Արցախյան պատերազմը: Մինչ այդ մասնակցում էր Երևանյան խաղաղ ցույցերին: Իսկ երբ ողջ Արցախով մեկ ծավալվեցին թե՛ մարտերը, թողեց գերազանցությամբ ընթացող իրավաբանական կրթությունը, վերադարձավ հայրենի ճարտար ու անդամագրվեց գյուղի պաշտպանությանը:



Դա 1992-ի ամռանն էր, երբ գյուղի ինքնապաշտպանական ուժերի հիման վրա ստեղծվեց թիվ 24 մոտոհրաձգային գումարտակը, որին և անդամագրվեց Հրայր Պողոսյանը: Նրա զինվորական հմտություններն ու քաջությունը դրսևորվեցին ոչ միայն հայրենի գյուղի մատույցներից ազերիների դուրս շարժման ժամանակ մարտերում: Հրայրը գումարտակի առաջին վաշտի հետ ակտիվորեն մասնակցել է նաև Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերի (Վաղուհաս, Դրմբոն, Հոռաթաղ, Մեհմանա և այլն) ազատագրման մարտերին:

Հրայրը շատ ընկերասեր, բարեկամասեր, նեղության մեջ գտնվողին օգնության ձեռք մեկնող էր: Նրա հետ իմ վերջին հանդիպումը կայացավ մահասարսուռ 1994-ի հունվարի 27-ից մի քանի օր առաջ: Գործի բերումով ժամանել էր Ստեփանակերտ ու առիթը բաց չթողեց մի քանի րոպեով տեսակցել Շուշիում հանգրվանած հորաքրոջ ընտանիքին:

Ցավով ու հուզմունքով պատմեց, որ զոհվել է իր մանկության ու մարտական ընկեր Սուրիկ Արիբաբայանը, ու հիշատակի խոսք էր բերել համընկելու համրապետական թերթին: Միաժամանակ նշեց, որ որոշել են ընկերներով հուշադրյուր կառուցել Սուրիկի հիշատակին: Ի՞նչ իմանար Հրայրը, որ շատ չանցած՝ այդ հուշադրյուրի հետևում պետք է հայտնվեր հուշատախտակ, որին երկրորդը պետք է շրջանակվեր իր անունը: Հրայրը նաև չասաց, որ երգվել էր ընկերոջ թարմ գերեզմանին (ինչպես մի քանի ամիս առաջ եղբայր-

ներով երգվել էին Լորիկի գերեզմանին)՝ վրեժ լուծել ու պայքարել՝ առանց գեներ վայր դնելու: Այդ ցասունն ու վրեժխնդրությունը ես կարողացի նրա աչքերում և երբեք չեմ մոռանա նրա այդ վերջին հայացքը... Ինքն էլ նկատելով իմ անհանգստությունը՝ իրեն հատուկ խորաթափանցությամբ ու իմաստությամբ հուսադրեց ինձ.

- Հորաքրոյր, արխային կաց, ամեն ինչ լավ է լինելու...

Այդ, ամեն ինչ եղավ այնպես, ինչպես Հրայրն ու նրա ընկերներն էին երազում: Մինչդեռ նրանց այնքան գեղեցիկ ապագայի նպատակներն այդպես էլ մնացին անկատար...

Գյուղի մատույցներում 1994թ. հունվարի 27-ին տեղի ունեցած վճռորոշ մարտերում արդեն վաշտի հրամանատար՝ ավագ լեյտենանտ Հրայր Պողոսյանը վիրավորվեց, բայց հրաժարվեց մարտական դիրքերը լքելուց՝ պատճառաբանելով, որ կղիմանա՝ մինչև իրեն կփոխարինեն: Նա իր մոտ քաշեց նռնակների արկը ու շարունակեց կռվել, մինչև վիրավորվեց երկրորդ անգամ ու... նահատակվեց՝ անշուշտ, իմաստուն հոր «Ամենայն տեղ մահը մի է...» պատգամին ականջալուր:

Հրայր Պողոսյանը, բարձր պահելով իր զինվորների մարտական ոգին, միշտ էլ փայլուն ձևով է կատարել իրեն հանձնարարված առաջադրանքները:

Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և անձնական արիության համար Հրայր Համլետի Պողոսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Իսկ վերջերս ճարտարի հ.5 միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Հրայր Պողոսյանի անվամբ:

*Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի, Բայց երանի, որ յուր ազգի Ազատության կոռնիկ...*

Այս տողերն են քանդակված Հրայրի հուշաքարին:

Այս տողերն են Հրայրի և մյուս բոլոր նահատակների կարճ կյանքի ու հավերժ հիշատակի ողջ իմաստն ու էությունը...

Որդու կորստից հետո անգամ Համլետ և Սվետլանա Պողոսյանները չփորձեցին զինվորական ուղին ընտրած մյուս որդուն՝ Ժիրայրին, ետ պահել ճանապարհից:

Հայրենիքի պաշտպանության գործում ունեցած մարտական ծառայությունների համար Ժ. Պողոսյանը ևս արժանացել է բազում բարձր մարտական պարգևների...

Այսօր էլ գնդապետ Ժիրայր Պողոսյանը շարունակում է ծառայել հայրենիքին՝ բարձր պահելով արժանավոր ընտանիքի պատիվը և հերոս եղբոր սուրբ հիշատակը:

Միաժամանակ նրանց ավանդական ընտանիքում դաստիարակվում են հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված նորօրյա Հրայրը, հայրենիքի ապագա զինվորներ նորօրյա Համլետը և Գոռը:

Իսկ օջախի մայրը՝ Սվետլանան, նահատակված որդու և կյանքից վաղաժամ հեռացած ամուսնու չսպիացող վերքերն անթղթած սրտում, մխիթարվում է թռռներով՝ յուրաքանչյուր հարմար պահին օգտագործելով նրանց իմաստուն պապի, հերոս հորեղբոր և մյուս հայ քաջորդիների մասին հուշեր պատմելով, փորձելով նորօրյա սերնդին տեղյակ պահել պատմական ու պատվական իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել այն տարիներին...

**Նաիրա ՊՈՂՈՍՅԱՆ Մանկավարժ ք. Շուշի**

ՉԵՎ ԵՎ ՈՃ

ՊՕՕՏԻ ԲՈՒՄՆԵՐԻ ԳՐՈՒՄԸ

ԵՎԵՔ ԲԱՐԸ ԲԱՐԻՆ ԴՆԵՔ

Միջոցառումները մեծ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Դրանք աշակերտի մեջ գեղեցիկի ու բարու ձևավորման ու հայեցողի դաստիարակման հիմք են: Միջոցառումների շնորհիվ հաղորդվող յուրաքանչյուր թեմա ավելի մատչելի է յուրացվում, մանավանդ, երբ համեմատվում է երգ ու երաժշտությանը: Յուրաքանչյուր աշակերտ ջանում է իր դերը կատարել կերպարին համահունչ, որն իր հերթին դրական ազդեցություն է ունենում ապագա սերնդի մեջ ազգային արժեքներն ու հատկանիշները պահպանելու գործում: Հոկտեմբերի 20-ին Քուրաթի միջնակարգ դպրոցում սովորող աշակերտները մասնակցեցին «Երեքուրեք» երգը: Գրականության և արվեստի միջոցով ներկայացվեցին հայրենասիրական և ազգային արժեքները: Գրականության մասում գրված էին պատմական Հայաստանի բոլոր մայրաքաղաքների անունները՝ Վան, Կարս, Անի, Դիլիջ, Արմավիր, Բագրատ և այլն: Կենտրոնական մասում երեքուրեք-երկուսուրեք էր իր գիմնաշանով, որից ոչ հեռու Ստեփանակերտը՝ փոքրիկ, բայց ավելի վառվում: Մայրաքաղաքների մի կողմում ծածանվում էր Հայաստանի, մյուս կողմում՝ Արցախի պետական դրոշմերը:

Միջոցառման հաղորդավարները նշեցին օրվա կարևորությունը և առաջարկեցին մի քանի րոպեով մայել անցյալին. ո՞վ և ինչպե՞ս է կառուցել այսօրվա մեր վարդապետ մայրաքաղաքը:

- Թե գարուններ չեք տեսել, եկե՛ք Երևան:
- Թե խամ քարից շենքեր չեք տեսել, եկե՛ք Երևան:
- Վարդագույն տուֆից քաղաք չեք տեսել, եկե՛ք Երևան:

Այս խոսքերով հաղորդավարները ցանկանում էին ավարտին հասցնել միջոցառումը, երբ սվեց արքայի խորհուրտ ծայրը.

- Ով դու, այսօրվա հայոց արքա՛, և դու՛ք, այսօրվա հայոց իշխաններ, ես՝ Արգիշտիս՝ արքան հայկական աշխարհի պահանջում և պարտադրում եմ ձեզ՝ քար չպակասի իմ քարե երկրից: Քարը քարից չպակասի իմ երկրում: Քարը քարին դրեք, ինչպես ես դրեցի, քանզի քարի վրա արյուն է թափվել, և սնված ծաղկունքն է բացվել: Հիշե՛ք խոսքերս:


Հնչեց «Երեքուրեք-երկուսուրեք» երգը: Ծափահարող աշակերտների բազմության մեջ կրթավ Արգիշտին՝ իր քարի պես ծանր խոսքը ծանրացնելով մեր սրտերում: Կարծես մեզ պարտադրում էր, որ յուրաքանչյուրս յուրովի քարը քարին դնենք մեր երկրում:

**Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ**  
Մարտիկների շրջանի Քուրաթի միջնակարգ դպրոցի աշխարհագրության և երաժշտության ուսուցչուհի

Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ. դարերից եկող իմաստությունը խորհել է տալիս գեղեցկության բովանդակության ու դրսևորման ձևերի մասին: Ստեղծագործական արտաբերության ունենալով ներշնչանքի աղբյուր, միշտ չի ձեռք բերում դասական ձև: Այդպիսի գործերը, մնալով որպես անհատի սուբյեկտիվիզմ, լավագույն դեպքում որպես արվեստի ոճ, ձևավորում են ռադիկալ միություններ: Երևույթի հետագա ընթացքը մինչև դասական, այսինքն՝ որպես համամարդկային ժառանգություն, հնարավոր է միայն Վերածննդի պարագայում: Արևելյան իմաստությունն ասում է. «Ձևը թակարդ է, իսկ ոճը՝ բանտ»: Այն բացահայտում է ձևի վրա հիմնված գործերի ցնցունային բնույթը մի կողմից, մյուս կողմից վկայակոչում է դասականության խորիմաստությունն ու դրսևորման ձևի գեներատիվությունը: Ներդաշնակությունն արդյո՞ք այն չափանիշն է, որը վկայում է գեղեցկության առկայությունը: Միանշանակ՝ դեռ ոչ: Ներդաշնակությունն ընդամենը արտահայտում է երկու և ավելի կողմերի բնական համատեղությունը: Ներդաշնակությունը ի՞նչ ձևերով է արտահայտվում, դեռ պետք է բացահայտենք: Արվեստի գործերում բաղադրիչ մասերը երկրաչափական մարմիններ կամ մաթեմատիկական այլաբանություններ են: Հետևապես որոշ հեղինակների փորձերը՝ ներկայացնել «գեղեցկություն» երևույթը երկրաչափական օրինաչափությունների կամ մաթեմատիկական հաշվարկումների հիմքի վրա, ընդամենը արհեստական համապատասխանեցում է: Իսկ եվրոպայում ծնունդ առած նրբագեղ ու մոդեռն մշակույթի գաղափարը փորձ է՝ արվեստին

տալ հոգեբանակիրառական ընթացք:

Արվեստի հանճարեղ գործերը, լինելով ճառագայթող միավոր, իրենց մեջ կրում են բաղկացուցիչ մասերի որակական կերպարանափոխություն: Ծնորհիվ դիմամիկ մասերի միջև ներդաշնակ առանցքի, ժամանակի ժապավենի վրա ի հայտ են գալիս բովանդակության նորանոր խորություններ: Հարակցվողի մոտ ժամանակը բացահայտ-



վում է որպես այդպիսին՝ հետագայում ապահովելով բնական ընթացք: Ժամանակի իմաստավորված ընթացքը, որը բերում է հակասությունների հանգուցալուծման, այսինքն՝ ժամանակի վերջ, բարեկենդան է մարդու համար: Այն մարդիկ, որոնք ունեն «մանդալա» սեփական մտքի համալրման գործում, ընկալում են դասական գործերի գեղեցկությունը՝ որպես մտահորիզոնի չափանիշ: Իսկ ովքեր կողմնակից են ձևականությանն ու ոճաբանությանը, մշակում են մեթոդներ՝ փորձելով սովորեցնել ուրիշներին: Գեղեցկությունը խաղաղություն, սեր, հիացմունք է տալիս համակարգին: Գեղեցկության չափն այնպիսի էություն է, որի լույսի տակ տարածությունը և ժամանակը խաղաղ են: Եթե գոյություն ունեն կատարյալ երևույթներ, որոնք փայլատակում են արևելքից՝ համաշխարհային մարդու միտքն ու հոգին, ապա ինչպե՞ս վարվել բնագիտության հետ: Մաթեմա-

տիկան, ֆիզիկան և այլ գիտություններ սկիզբ են առել որոշակի համակարգի ներսում, որով և արտահայտվել է տվյալ ժամանակի մտահորիզոնը: Կատարված բացահայտումների հիման վրա ձևավորված ավելի լայն հորիզոնը զարգացման պահանջարկ է ներկայացրել ձեռք բերածին: Մաթեմատիկան, լինելով ճշգրիտ գիտություն, թվերի բացահայտումից ի վեր նույնպես զարգացում է ապրել:

Ժամանակակից տիեզերքում կատարվող հետազոտություններում օգտագործվող մաթեմատիկական բարդ ճշգրտությունները, ներկա ժամանակի ճշգրտությունն են: Գիտության բացահայտումներ կատարող անհատների մոտ բացի պրակտիկ հայտնագործությունից մնում է որպես այդպիսի փիլիսոփայական մտածելաձև, որում նրանք ձգտում են ավելի ուղիղ ճանապարհով ու ավելի արագ հասնել վերջնակետին: Դա խոսում է մարդու բիոֆիզիկական աշխարհում գոյություն ունեցող ամփոփված ու կատարյալ երևույթի անհրաժեշտության մասին: Այդ իսկ պատճառով ճիշտ կլինի գիտակրթական համակարգում տեղ տալ եզրահանգումներին ու ապագա քայլերի մշակման անմիջապես ծրագրային գործառնություններից հետո: Օրինակ՝ ուսուցիչը դպրոցում հերթական ծրագրային թեման դասավանդելուց հետո կարող է աշակերտներից հարցնել՝ ինչ թեմա էք պատկերացնում մատուցված թեմայից հետո ու ինչ մանկավարժական դասավանդման ձև եք ակնկալում: Իր հերթին ուսուցիչը կարող է հարցնել՝ գիտության ինչ հայտնագործություններ եք կանխատեսում հետագա թեմատիկական ծրագրերի ձևավոր-

ման համար: Ինքնագտված միտքն ավելի ճշգրիտ է կառավարում գործը, քան թե ենթակա ու հարակցված միտքը: Անընդհատ խանգարիչ երևույթներից ազատվելն ու նորանոր գիտելիքների համալրման հայտ ներկայացնելը լավագույն տարբերակն է զարգացման ճանապարհին:

Արևմուտքում գործող ժողովրդական կառավարման համակարգը հիմնված է նշված սկզբունքների վրա: Սոցիալական շերտավորումների ամենավերջին քաղաքացին, ունենալով վճարող ծայրի հնարավորություն, ազատ է շերտավորումների մեքենայություններից: Դրա շնորհիվ ապահովվում է զարգացող որակ, իսկ որոշ արևելյան ժողովուրդների մոտ գործիքի տեղ օգտագործվող գիտելիքը՝ ցնցոտիներ հագած ժողովրդի վրա: Մարդկային պատմության մեջ մուտք գործած արվեստի ու գիտության հանճարեղ գործերը, որոնք ժամանակակիցների կողմից քարկոծվել, իսկ հետագայում մեծարվել են, խոսում է պատմական մտքի՝ իսկական կոչումից հեռու լինելու մասին: Հայ ժողովրդի պատմության մեջ երբ առկա են ծայրահեղականությունը, եսանդությունը և այլ արատներ, առավել ևս պետք է ընկալենք գործունեության այն իմաստը, որը թափանցիկ ու փայլուն ձևերով մեզ կտանի դեպի զարգացում:

Տվյալ հոդվածը փորձ է ավելի ճշգրիտ հաղորդակցություն բացահայտել աշակերտի ու ուսուցչի, ուսուցչի ու գիտնականի, գիտնականի ու արվեստագետի, արվեստի ու աստվածաբանության, քաղաքացու ու իշխանության, ի վերջո՝ ընթերցողի ու հեղինակի միջև: Ուրախ կլինեմք ընթերցողներից լսել սեփական մտքերի ու գործերի մասին:

**Գրիգորի ԱՅՎԱԶՅԱՆ**  
ք. Մարտիկերպ

ԻՉՄՉ ԾՃՈՓՄՈՃ, ԸՃԱՄՑ ԹՉԻ ԱՅՈՅՉ ԻՉՄՈՅ

Հայ ժողովրդի կյանքում միշտ մեծ նշանակություն են ունեցել ազգագրական երգն ու պարը: Մեր երգերն ու պարերը կրում են հազարամյակներ առաջ ստեղծված վիպական, ծիսական և այլ պարերի կնիքը և առավել ևս հոգեբանությամբ զրեթե ոչ մի փոփոխություն չեն կրել: Այդպես եղել է բազում դարերի ընթացքում, նույնիսկ անկախությունը կորցրած ժամանակ հային հայ պահող հիմնական կրթականներից մեկն ազգային արվեստն է եղել, որում թերևս կարևորագույն դերը պատկանել է ազգագրական երգ ու պարին:



Այսինքն՝ հստակ է այն, թե ինչքան է կարևորվում ազգային դաստիարակության և ազգային դիմագծի պահպանման մեջ ազգային երգարվեստի ու պարարվեստի անաղարտ պահպանումը:

Կարևորելով մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության, ազգային գաղափարախոսության, ազգային բանակի հանդեպ հարգանքի, աշակերտների մոտ ինքնահաստատման ունակության ձևավորումը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի տնօրինությունը հերթական անգամ՝ նոյեմբերի

16-ին կազմակերպել էր «Մենք ենք, մեր սարերը» ազգագրական երգի ու պարի համույթի համերգը դպրոցում:

Համերգային ծրագիրը բաղկացած էր մի քանի մասերից՝ դարաբաղյան ազգագրական, սիրո, կատակ երգեր ու պարեր, երգեր՝



մերին ու Հայոց բանակին, մի մասն էլ հավերժացրեց Հայոց ցեղասպանության անմեղ գոհերի հիշատակը՝ հնչեցնելով հայրենասիրական, ֆիդայական երգեր ու պարեր: Հուզմունքն ու հպարտությունը երգ ու պարի ելքերով միախառնվել էին իրար:

Նշեն, որ կատարումներին մի առանձին երանգ էին հաղորդում դպրոցի տարրական օղակի աշակերտների ոգևորությամբ լցված պարերը, քանզի հայրենասիրական ոգին հայի գեմի մեջ է:

Ազգային երգն ու պարը շատ կարևոր են հայի տեսակը պահելու առումով, և եթե չենք ուզում կորցնել մեր՝ իբրև արարող ժողովրդի տեսակը, պետք է պահպանենք այդ երգերն ու պարերը, որոնք դարերով պահել են մեզ:

**Մերի ՀԱԿՈՒԲՅԱՆ**

ՃԻՇՏ Է, ՄԻՍԱԼ Է

ՀՈՐԴՈՐԱԿ ԼԵԶԿԻ ԿՈՄԻՏԵԻ. Ո՞Ր, ԹԵ՛Ն ՈՎ

Հայ ժամանակակից գրականությունից բաղկաված այս մի քանի օրինակները ցույց են տալիս հայերենում հատուկ և հասարակ գոյականների կապակցվող որ հարաբերական դերանվան գործածության ձևավորված ավանդույթը:

Լևոնը, որ կանգնած էր գրողներին ուրիշ խմբի մեջ, հարցրեց. «Ի՞նչ է, արդեն սկսեց գլխին գոռ տա՞լ» (Հրանտ Մաթևոսյան):

Միակ մարդը, որ լուրջ չէր ընդունում այդ ամբողջը և գիտեր իսկականի արժեքը, ես էի (Աղասի Այվազյան):

Բենին ամենից մոտիկ նստած էին երեխաները, որոնք շատ քիչ բանից են արդեն զարմանում (Վարդգես Պետրոսյան):

Դա այն Գասպարն էր, որ անցյալ տարի նախապես հայտնել էր Պավելի մահվան լուրը (Զորայր Խալափյան):

Ռեկտորի կինը, որի կրծքին կարմրագույն վարդ էր ամրացված, ղանդիլին սասց, որ դա պատերազմող մի զինվոր էր ուղարկել խրամատներից (Լևոն Խեչոյան):

Այլևս չէր ուզում նեղություն պատճառել ազգականներին, որոնց տանը առանց իրեն էլ նեղվածք էր (Վահագն Գրիգորյան):

Այս նախադասությունների որ, որի, որոնք, որոնց հարաբերականների փոխարեն շատերն այժմ ու, ում, ովքեր են գործածում, և դա օրեցօր ավելի ու ավելի է տարածվում:

Հորդորակի նպատակն է անդրադառնալ վերջին տարիներին հայերենում (մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի) լեզվում, պաշտոնյաների խոսքում) խիստ տարածված այդ անհարգազուրկ իրողությունը և վերացնել այն:

Կանոնը գրական հայերենում

Որոշիչ երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության գոյականով արտահայտված անդամին՝ ցույց տալով դրա որևէ հատկանիշ՝ որակական, քանակական, ժամանակային, տարածական և այլն: Երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասությանը կարող է կապակցվել հարաբերականներով՝ որ(և), ինչպիսի, որպիսի, ինչ, որքան, ինչքան, երբ, որտեղ, ուր, ինչպես, ով և որ, թե շարկապներով: Սրանցից ավելի հաճախ կիրառվում է որ հարաբերականը: Օրինակ՝ «Երեկ պատահաբար տեսայ այն տղային, որի հետ դու էիր ծանոթացրել»:

Վերջին տարիներին տարածվել է որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասությանը որ-ի փոխարեն ով-ով կապակցելը հատկապես այն դեպքերում, երբ երկրորդական նախադասությունը լրացնում է անձ ցույց տվող գոյականին: Բերենք մի քանի օրինակ՝

Եկել էր նաև Բելգիայի վարչապետը, ով առաջին անգամ էր այցելում Ծիծեռնակաբերդ:

Մենք մարդիկ ենք, ովքեր ավելի քան տասը տարի փողոցում ծեծվել են:

Սուբեկիանին այն պաշտոնյան է, ում ամիսներ առաջ Վրաստանի իշխանությունները կալանավորեցին՝ երկու անջափահասների սպանության գործով սկսված զանգվածային ցույցերը հանդարտեցնելու համար:

Այս գործածությունն արդեն այնքան է տարածվել, որ ով հարաբերականի միջոցով երկրորդական նախադասությունը սկսել են կապակցել անգամ այն գլխավոր նախադասությունների հետ, որոնց լրացյալ գոյականն անձ չէ, օրինակ՝ «Հայտնի է առաջին փնթը, ով նվաճել է ԱՄ 2018 թ. եզրափակչի ուղեգիր», «Դուք կիմանաք թե՛ նոր անունները, թե՛ հին անունները, ովքեր մնալու են», «Ի դեպ, Չուգասոյանն այդպիսի ուժեր է համարում Հանրապետականին, Բարգավաճ Հայաստանին և Դաշնակցությանը, ովքեր կողմ քվեարկեցին Աժ-ի կանոնակարգ օրենքի հայտնի փոփոխությանը» և այլն:

Քանի որ որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորին որ-ի փոխարեն ով-ով կապակցելու դեպքերը գերակշռում են այն դեպքերում, երբ լրացյալ անձ ցույց տվող գոյական է, կարծում ենք՝

նման եղանակով կապակցելու պատճառը հենց անձի առումը չեչտելն է. որ-ը ով-ով փոխարինած մարդիկ հավանաբար կարծում են, որ սխալ է անձի դեպքում որ գրելը, այնինչ պետք է ասել, որ որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորին կապակցվելիս անձի և իրի անմասն տարբերակումը չի գործում, հետևաբար կարիք չկա նման տարբերակում մտցնելու և ըստ այդմ կապակցման միջոցը փոխելու:

Ինչպե՞ս որ, ինչպե՞ս կողմնորոշվել

Ինչպես արդեն նշեցինք, ով-ի և որ-ի կիրառության հիմնական խնդիրն առաջանում է որոշիչ երկրորդական նախադասության դեպքում: Քանի որ որոշիչ երկրորդական նախադասությունը ցույց է տալիս իր լրացյալի որևէ

հատկանիշ, տրամաբանական է, որ պիտի պատասխանի հիմնականում ո՞ր, երբեմն էլ՝ ինչպիսի՞ հարցերին: Հասկանալու համար՝ ճիշտ է գործածել որ, թե՛ ով հարաբերականը, կարելի է ընդամենը հարց տալ որոշիչ երկրորդական նախադասությանը: Եթե այն պատասխանի ո՞ր հարցին, պետք է կիրառել որ հարաբերականը, իսկ եթե ո՞վ, ո՞ւմ հարցերին, ապա համապատասխան դերանունները:

Այս տրամաբանությամբ դիտարկենք վերը բերված նախադասությունները: Այսպես՝

Եկել էր նաև Բելգիայի վարչապետը, ով առաջին անգամ էր այցելում Ծիծեռնակաբերդ:

Երկրորդական նախադասությունը (ով առաջին անգամ էր այցելում Ծիծեռնակաբերդ) լրացնում է վարչապետը գոյականին: Հարց տանք. եկել էր նաև Բելգիայի ո՞ր վարչապետը:

Ոչ մի կերպ չենք կարող հարցնել՝ եկել էր նաև Բելգիայի ո՞վ վարչապետը: Ինչպես տեսանք, երկրորդական նախադասությունը չի պատասխանում ո՞վ հարցին, հետևաբար սխալ է այն գլխավորին ով-ով կապակցելը:

Դիտարկենք մյուս օրինակը, որում երկրորդական նախադասությունը գլխավորին կապակցվում է ով-ի հոգնակի թվով՝ ովքեր հարաբերականով:

Մենք մարդիկ ենք, ովքեր ավելի քան տասը տարի փողոցում ծեծվել են:

Երկրորդական նախադասությունը՝ «ովքեր ավելի քան տասը տարի փողոցում ծեծվել են», լրացնում է մարդիկ գոյականին: Հարց տանք. մենք ո՞ր մարդիկ ենք. չենք հարցնի՞ մենք ո՞վ մարդիկ ենք: Պատասխանը կլինի՝ «Մենք մարդիկ ենք, որոնք ավելի քան տասը տարի փողոցում ծեծվել են», իսկ նախադասությունը փոխակերպելու դեպքում՝ «Մենք ավելի քան տասը տարի փողոցում ծեծված մարդիկ ենք»:

Հաջորդ օրինակում որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորին կապակցվում է ով-ի հոլովական տարբերակով՝ ում հարաբերականով:

Սուբեկիանին այն պաշտոնյան է, ում ամիսներ առաջ Վրաստանի իշխանությունները կալանավորեցին՝ 2 անջափահասների սպանության գործով սկսած զանգվածային ցույցերը հանդարտեցնելու համար:

Պաշտոնյա գոյականին լրացնող «ու՞մ ամիսներ առաջ Վրաստանի իշխանությունները կալանավորեցին՝ 2 անջափահասների սպանության գործով սկսած զանգվածային ցույցերը հանդարտեցնելու համար» երկրորդական նախադասությանն ուղղված հարցը կլինի՝ Սուբեկիանին ո՞ր պաշտոնյան է և ո՞չ՝ Սուբեկիանին ո՞ւմ պաշտոնյան է, հետևաբար ճիշտ է երկրորդական գլխավորին կապակցել որի հարաբերականով (Սուբեկիանին այն պաշտոնյան է, որին ամիսներ առաջ Վրաստանի իշխանությունները կալանավորեցին՝ 2 անջափահասների սպանության գործով սկսած զանգվածային ցույցերը հանդարտեցնելու համար):

Որոշիչ երկրորդական նախադասությունների հարաբերականները գլխավոր նախադասության մեջ՝ լրացյալ գոյականի կողքին, ունենում են հարաբերյալ, որի առկայությունն արդեն իսկ հուշում է, որ գործ ունենք որոշիչ երկրորդական նախադասության հետ և պետք է գրենք որ:

Դիտարկենք նման դեպքի սխալ կիրառության մեկ օրինակ՝

Ով է այն պաշտոնյան, ով ըստ Հայկ Դեմոյանի՝ աշխատում է թուրքիայի հատուկ ծառայությունների համար:

Երկրորդական նախադասությանը կտանք «ո՞ր պաշտոնյան» հարցը: Փոխակերպելիս պատասխանը կլինի՝ «Ով է ըստ Հայկ Դեմոյանի՝ թուրքիայի հատուկ ծառայությունների համար աշխատող պաշտոնյան»: Երկրորդական նախադասությունն այստեղ փոխարինում է այն հարաբերյալին, և նախադասությունը փոխակերպելիս «այն»-ը չի պահպանվում:

Նշենք, որ թեպետ որ-ի և ով-ի կապակցման այս խնդիրը հիմնականում առաջանում է որոշիչ երկրորդական նախադասությունների դեպքում, սակայն կարող են լինել դեպքեր, երբ երկրորդական նախադասությունը կարող է ընկալվել նաև որպես բացահայտիչ, քանի որ դրանց սահմանը շատ նուրբ է: Այս դեպքում ևս երկրորդական գլխավորին կապակցվում է որ հարաբերականով: Օրինակ՝

Եղիշե Չարենցը, որ հայ նշանավոր բանաստեղծ է, մահացել է 1937 թվականին:

Այս երկրորդական նախադասությունը (որ հայ նշանավոր բանաստեղծ է) կարող է փոխակերպվել՝ ուրպես բացահայտիչ երկրորդական նախադասություն (Եղիշե Չարենցը՝ հայ նշանավոր բանաստեղծը, մահացել է 1937 թվականին), և՛ որպես որոշիչ երկրորդական նախադասություն (Հայ նշանավոր բանաստեղծ Եղիշե

Չարենցը մահացել է 1937 թվականին):

Ե՞րբ կիրառել ով-ը

Ով հարաբերականով երկրորդական նախադասությունը կարող ենք կապակցել գլխավորին այն դեպքում, երբ երկրորդական պատասխանում է ո՞վ, ո՞ւմ հարցերին: Այսպիսին է նա, ով կառուցյո՞ղ իր նրանք, ովքեր, նրան, ում, նրանց, ում և համանման դրսևորումներով: Այս կառուցյների կիրառության դեպքում երկրորդական նախադասությունը հիմնականում բացահայտիչ է, սակայն կարող է լինել նաև ստորոգելի, ուղիղ խնդիր և այլն՝ կախված նրանից՝ «նա»-ն հարաբերյալ է, թե՛ ոչ:

Կողմնորոշվելու համար կարևոր է հիշել, որ երկրորդական նախադասությունը գլխավորին ով հարաբերականով կարող ենք կապակցել այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ ունենք նա լրացյալ:

Քաջ մարդը ոչ թե նա է, ով չի վախենում, այլ նա, ով հաղթահարում է այդ վախը:

Հարց տանք «ով չի վախենում» և «ով հաղթահարում է այդ վախը» երկրորդական նախադասություններին: Կասենք՝ քաջ մարդը ո՞վ է երկրորդական նախադասությունը ստորոգելի է:

Ես հարգում եմ նրան, ով կարևորում է քաղաքացու և պետության շահը:

Այստեղ «ով կարևորում է քաղաքացու և պետության շահը» երկրորդական պատասխանում է ո՞ւմ հարցին. կհարցնենք՝ ես հարգում եմ ո՞ւմ, պատասխանը կլինի՝ քաղաքացու և պետության շահը կարևորողին: Երկրորդական նախադասությունը ուղիղ խնդիր է:

Նա, ով կնշանակվի այդ պաշտոնում, կդառնա հիմնական պատասխանատուն:

Այս օրինակում «ով կնշանակվի այդ պաշտոնում» երկրորդական նախադասությունը կարող է ընկալվել և՛ որպես ենթակա երկրորդական, եթե «նա»-ն համարենք հարաբերյալ և զեղչենք, և՛ որպես բացահայտիչ երկրորդական, եթե «նա»-ն չհամարենք հարաբերյալ. այս դեպքում այն չի զեղչվի: Ենթակա երկրորդականի դեպքում կփոխակերպվի այսպես. «Այդ պաշտոնում նշանակվողը կդառնա հիմնական պատասխանատուն», իսկ բացահայտիչ երկրորդականի դեպքում՝ «Նա՛՛ այդ պաշտոնում նշանակվողը, կդառնա հիմնական պատասխանատուն»:

Հաջորդ օրինակում գործ ունենք հոգնակի թվով գործածված կառույցի հետ, և երկրորդական նախադասությունը պատասխանում է ովքերի հարցին:

Նրանք, ովքեր կփորձեն արհամարհել օրենքը, ժողովրդի կարծիքն ու պահանջը, կհայտնվեն պատմության աղբանոցում:

Դիտարկենք մեկ այլ օրինակ.

«Փառք ու պատիվ բոլոր նրանց, ում ջանքերի շնորհիվ այսօր ունենք մարտունակ բանակ»:

Երկրորդական նախադասության (ու՞մ ջանքերի շնորհիվ այսօր ունենք մարտունակ բանակ) ուղղված հարցը կլինի փառք ու պատիվ ո՞ւմ, ոչ թե փառք ու պատիվ ո՞ր նրանց: Ի դեպ, սա չի նշանակում, որ չենք կարող գործածել նրանք, որոնք կառուցյո՞ղ. այն ևս կիրառելի է: Այսպես՝ «Փառք ու պատիվ բոլոր նրանց, որոնց ջանքերի շնորհիվ այսօր ունենք մարտունակ բանակ»:

Ի դեպ, որպես հարաբերական ով-ը կարող է գործածվել նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ ունի ամեն ոք, յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուր, բոլորը, ամենքը և համանման դերանուններ: Օրինակ՝ Յուրաքանչյուր ոք, ով ճանաչում էր նրան, լավ կարծիք ուներ նրա մասին:

Ամփոփելով՝ նշենք հետևյալը. հայերենում որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասությանը կապակցելու ամենատարածված միջոցը որ հարաբերականն է: Ճիշտ կողմնորոշվելու և որ-ի փոխարեն սխալմամբ ով կիրառելու համար երկրորդական նախադասությանը պետք է հարց տալ. եթե այն պատասխանում է ո՞ր հարցին, պետք է գործածել հենց որ հարաբերականը:

Ով հարաբերականը գործածելի է այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ նրա լրացյալը նա դերանունն է, այսինքն՝ գործ ունենք նա, ով կառույցի և դրա տարբեր դրսևորումների հետ: Միաժամանակ այն կարող է կիրառվել նաև այն դեպքերում, երբ լրացնում է յուրաքանչյուր, յուրաքանչյուր ոք, բոլորը, ամեն ոք և այլ դերանուններին:

Այսպիսով՝ գոյականների հետ գործածում ենք որ հարաբերականը, իսկ դերանունների հետ՝ ով-ը (նաև որ-ը):

խոսք բարի երթի  
à Èà Æ è ð ì ° ð à ò Ò  
î ° Ò à ò Û Æ



Ֆ ա թ մ ա  
եսայանը ծնվել է 1948թ. Ասկերանի շրջանի Ղշլաղ (այժմ՝ Ծաղկաշատ) գյուղում: Մաթեն ատիկայի ճյուղում սերունդացած սերը նրա մեջ սերունդացած սերը նրա մեջ սերունդացած սերը նրա մեջ սերունդացած սերը

երջանակահիշատակ Սուրեն Գաբրիելյանը, որին երախտապարտ է իր ընտանիքի մասնագիտության համար: Բաբվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հաբերդի միջնակարգ դպրոցում:

Հիսուն տարվա բուրգանվեր և արգասավոր աշխատանքից հետո Հաբերդի միջնակարգ դպրոցում իր գործունեությունն ավարտին հասցրեց իր կոչմանը՝ ճիշտացան ու բազմափորձ մանկավարժը, ուսուցչական կոլեկտիվի ու աշակերտական հանրության սիրելին և խորհրդատուն: Ֆաթմա Եսայանը: Մարդ, որ իր նվիրական ու անբասիր նկարագրով ընդունված է բոլորի կողմից, մանկավարժ, որ իր վեհ առաքելությանը հավատարիմ՝ բազում սերունդներ է կրթել ու դաստիարակել:

Նրա սաներից շատերը հայտնի մանկավարժներ են, բժիշկներ, ինժեներներ ու հասարակական գործիչներ, որոնք երբեք չեն մոռանում իրենց մաթեմատիկայի ուսուցչուհուն, որն իրենց առջև բացել է թվերի զարմանահրաշ աշխարհը և անշահախնդիր մատուցել գիտելիքներ:

Իրավաբան, եթե ինչ-որ տեղ «ուսուցիչ» և «ծնող» հասկացությունները մոյսանում են, դա նրա՛ մասին է սաված:

Տիկին Եսայանը, կրթության և դաստիարակության գաղափարակիր լինելով, իր խոր իմաստությանը, անսահման համբերությանը, անեզր սիրով ամեն օր բացահայտել է բարու, գեղեցիկի, լավի, իմաստության խորհուրդը:

Վաստակաշատ ուսուցչուհու համար երբևիցե փակ դռներ չեն եղել: Նա երեխաների հետ խոսում էր մաթեմատիկայի լեզվով, տիեզերական լեզվով, սաների սիրտն ու միտքը բացվում էին նրա առաջ, և բոլորի սրտերում նա տեղ ունի:

Ֆաթմա Եսայան, լավ ընկեր ու բարեկամ, հրաշալի մայր, մանկավարժ և դաստիարակ, բարի երթ Ձեզ, երջանիկ և խաղաղ հանգիստ: Դուք չեք հեռանում դպրոցից, քանզի միշտ և ամենուր մեզ հետ եք, մեզ հետ են Ձեր իմաստուն խոսքը, լուսաշող ժպիտը, գորովագուր հայացքը: Եվ քանի դեռ կա Հաբերդի միջնակարգ դպրոցը, Դուք այստեղ եք՝ մեր կողքին:

Սիրելի՛ տիկին Եսայան, մեր ավագ ընկեր, միշտ այցելեք դպրոց, Ձեր ներկայությանը երջանակացրեք ու ջերմացրեք մեզ: Ձեզ մաղթում ենք երջանիկ ու լի օրեր, մնացեք միշտ արի ու բարի, առողջ ու գեղեցիկ: Մեր խոսքը ուզում ենք եզրափակել բանաստեղծի բաներով:

Ամպերի նման թող սահեն-զնան  
Մտքերը մոլոր,  
Ցավերը բոլոր,  
Եվ սիրող մնա պայծառ հավիտյան  
Երկնի սման,  
Եվ աստղերի պես թող միշտ վառ մնան  
Երազ ու խնդում  
Քո բոցե սրտում,  
Եվ ցուլան, ցուլան աստղերի նման  
Անմահ ու արթուն...  
Ու որպես արևն արդար ու առատ՝  
Խավար աշխարհում  
Սիրող հրահրում  
Թող ժպտա պայծառ, խնդուն, անարատ  
Չարին ու բարուն:

Հաբերդի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ





ԶՈՒԳԱՆՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Հայաստանում կրթությամբ հետաքրքրվողների շատերը բազմիցս լսել են Ֆինլանդիայի զարմանահարաշար կրթական համակարգի մասին: Այն իսկապես շատ լավն է, անխոս աշակերտ է, սակայն ֆիննական կրթական համակարգի հատկանիշների շուրջ պատվում են որոշ առասպելներ, որոնք ծագում են հիմնականում մակերեսային դիտարկումներից և հեռու են իրականությունից:

Մինչև նախորդ դարի վերջը Ֆինլանդիան աշխարհին հայտնի էր հիմնականում «Նոկիա» ընկերության շնորհիվ: Սակայն 2000 թվականին անցկացված PISA միջազգային թեստավորման արդյունքում Ֆինլանդիան ճանաչվեց առաջատար, և այդ ժամանակից ի վեր բոլորը փորձում էին հասկանալ, թե որն է դրա գաղտնիքը:

Ֆինլանդիայում կրթական տուրիզմի բուռն աճ սկսվեց: Մարդիկ գնում էին այնտեղ և ոգեւորվում ֆինների ստեղծած համակարգի առանձնահատկություններով, սակայն քիչ էին հետաքրքրվում, թե ինչպես է այն կառուցվել և ինչպես են իրականում աշխատում այդ առանձնահատկությունները: Այդպես էլ առաջացան առասպելները:

Առասպել 1. Ֆինլանդիայի դպրոցները բացարձակ անկախ են և ստուգումների չեն ենթարկվում

Դա այդպես չէ: Բոլոր դպրոցներն ամեն տարի տվյալներ են տրամադրում ազգային կրթական խորհրդին, որը դրանք ի մի է բերում և հրապարակում ընդհանրացված վիճակագրության տեսքով: Ամեն դպրոց իր հերթին ստանում է համեմատական վիճակագրություն և ըստ օրենքի պարտավոր է դրա հիման վրա վերանայել իր աշխատանքը ու քայլեր ձեռնարկել կրթության որակը բարձրացնելու համար: Եթե չանի, կպատժվի: Դրան ֆինները հասել են տասնյակ տարիների զարգացման արդյունքում: Նախորդ դարի յոթանասունականներից մինչև դարի վերջը, երբ ընթանում էին ֆիննական կրթական բա-

րեփոխումները, երկրում գործում էր կենտրոնացված և խիստ վերստուգողական համակարգ: Բոլոր դպրոցները պարտավոր էին ի կատար ածել կենտրոնի հղած ցուցումները, որել և ազատություն չունեին, ուսուցիչներին ոչ ոք չէր վստահում:

Միայն նոր դարի սկզբին, երբ բոլոր դպրոցները հասան աշխատանքի որակի բարձր մակարդակի, հնարավոր եղավ ազատականացնել մոտեցումները և վստահել դպրոցների ինքնագարգացման ընթացքին: Պատկերը գեղեցիկ է, բայց արդյունքում Ֆինլանդիան կրթական զգալի նահանջ է ունեցել և վերջին երկու PISA թեստերում, ել իրենց ներքին տվյալների համաձայն: Իրականում շատերը Ֆինլանդիայում համարում են, որ կրթությունը ճգնաժամային վիճակում է և կտրուկ բարեփոխումների կարիք ունի:

Առասպել 2. Ֆինլանդիայում չկան մասնավոր դպրոցներ, բոլոր դպրոցները հավասարապես լավ են և կա դպրոցի ընտրության բացարձակ ազատություն

Սա անհեթեթություն է: Մասնավոր դպրոցներ կան, թեև շատ չեն. սովորական համակրթական դպրոցների ընդամենը 2%-ն է մասնավոր, իսկ մասնագիտական դպրոցների (ուր սովորում են 16 տարեկանից սկսած)՝ 12%-ը: Շփոթումը գալիս է նրանից, որ դրանք, ինչպես և պետական դպրոցները, անվճար են, քանի որ պետությունը մասնավոր դպրոցների ուսպումը մույնպես ամբողջապես ծածկում է ուսման ծախսերը:

Ինչ վերաբերում է դպրոցների ընտրությանը, ապա ֆինն աշակերտների մոտ 40%-ը փաստացի չի հաղթահարում ավագ դպրոցի մուտքային պահանջները և շարունակում է կրթությունը միջին մասնագիտական հաստատություններում: Թեև դպրոցներում պաշտոնապես ընտրովի ընդունելություն չկա, փաստերն այլ բան են ասում: Ֆինլանդիայի աշակերտների մոտ 37%-ը հաճախում է Յելսինկի-ի դպրոցները, որոնցում արդեն մրցակցու-

թյուն է առաջացել, և այդ դպրոցները ստիպված են ընտրություն կատարել՝ հիմնվելով քննությունների արդյունքների վրա:

2000-ականների սկզբից Ֆինլանդիայում կտրուկ աճել է բարեկեցության տարբերությունը, և գնալով ավելի շատ ընտանիքներ գումար չեն խնայում լավ դպրոցների շրջակայքում բնակարաններ վարձելու համար, ինչը բերում է դպրոցների միջև որակական տարբերության աճին: Բացի դրանից, կան տարատեսակ մասնագիտացված դպրոցներ (բնագիտական կամ արվեստի ուղղվածությամբ), որոնք տարբերվում են ուսուցման որակով, և որտեղ ընդունվելը դժվար է:

Պետք է նաև ավելացնել, որ ֆիննական դպրոցներում աշակերտներն այնքան էլ երջանիկ չեն: Վերջին հետազոտությունները մտահոգիչ են. 14-15 տարեկան աշակերտների մոտ կեսը կարծում է, որ ուսուցիչները հոգ չեն տանում իրենց մասին, իսկ երկրի օմբուդսմենը փաստում է, որ ֆինն աղջիկների 20-25 տոկոսը հոգեբանական լուրջ խնդիրներ ունի և գտնվում է սոցիալական աշխատակիցների անընդհատ աջակցության ներքո:

Վերջերս բանավեճ ունեցա ֆիննական հայտնի դպրոցներից մեկի փոխտնօրենի հետ: Ես պնդում էի, որ աշակերտները պետք է իրենց բնական և ազատ դրսևորեն դպրոցում, որպեսզի մենք տեսնենք նրանց խնդիրները և կարողանանք օգնել հաղթահարել դրանք: Նա համոզված էր, որ դպրոցը աշակերտներից պետք է պահանջի բացարձակ վարքագիծ: Բայց խոսակցության վերջում ինքն էլ խոստովանեց, որ իրենց դպրոցում զգալի քանակի երեխաներ խնդիրներ ունեն. առկա են բուլեմիա, անորթեսիա և այլ տեսակի հոգեբանական բարդություններ: Մի խոսքով՝ իդեալը զոհեր է պահանջում, և շատ հաճախ զոհ են դառնում հենց երեխաները, որոնք ի վիճակի չեն համապատասխանելու ֆիննական դպրոցի բարձր պահանջներին:

Առասպել 3. Ուսուցիչները շատ բարձր աշխատավարձ են ստանում

ճիշտ է, Ֆինլանդիայում ուսուցիչները շատ հարգված են: Եթե Անգլիայում ուսուցիչ դառնալու մրցույթում միջինում մոտ երկու մարդ է դիմում մեկ տեղի համար, ապա Ֆինլանդիայում այդ թիվը հասնում է 100-ի: Դա պատմական պատճառներ ունի:

Ժամանակին, երբ Ռուսաստանը փորձում էր Ֆինլանդիայի վրա տարածել իր մշակութային ազդեցությունը, ուսուցիչները խիզախորեն հրաժարվեցին դասավանդել ռուսերեն և այդպիսով մեծ ներդրում ունեցան ազգային մշակութային կայացման գործում: Սակայն երկրում առկա միջին աշխատավարձերի համադրությամբ՝ ուսուցիչների եկամուտը չի առանձնանում: Մի խոսքով՝ աշխատավարձը ոչ բարձր է, ոչ էլ՝ ցածր. սովորական է:

Որպես վերջաբան

Ֆիննական կրթական համակարգը խոր պատմական արմատներ ունի: 19-րդ դարում քահանաները չէին ամուսնացնում զույգերին, եթե նրանցից որեւէ մեկը կարող չզգիտեր: Ֆինները 20-րդ դարում ամենասոցիալիստական ազգերից մեկն էին ազատ եվրոպայում. հավասարության գաղափարը ոչ թե պետական քարոզչության մաս էր, այլ ազգի ներքին համոզմունքը: Սակայն անգամ Ֆինլանդիայի նման եզակիտար երկրում կա տարբերակում: Ավագ դպրոց հաճախում են միայն այն երեխաները, որոնք սիրում են ուսումը և իրենց ապագան կապում են շարունակական կրթության հետ: Երբ մենք կրթական համակարգի զարգացումն ենք նախագծում, պիտի խորը վերլուծություն կատարենք, ճիշտ համեմատություններ անենք և մեր ուրույն ճանապարհը ձևավորենք, այլ ոչ թե առաջնորդվենք անբովանդակ մակերեսային պատկերացումներով:

Արամ ՓԱՆՉԱՆՅԱՆ «Այբ» դպրոցի տնօրեն, ABBYY ընկերության փոխնախագահ

mediamax.am

ԶԻՔԸ ԾՃՔԸ ԾՕ՝ ՕՍԶԷՍ àòՍԱԷՍՁՕ՝ ՁԵՁ՝ ԾՔàÀՍàòՍ

Անցած շաբաթ Մեծ Բրիտանայում և Սինգապուրում հայտարարվեց կրթական քաղաքականության մեջ կարևոր փոփոխություններ կատարելու մասին: Մեծ Բրիտանիայի կրթության տեսչության պետ Ամանդա Ափիլմենը հայտարարեց, որ փոփոխություններ են լինելու դպրոցների տեսչավորման կարգում:

Մինչև այժմ աշակերտների թվանշանները, քննությունների արդյունքները համարվում էին դպրոցը գնահատելու առանցքային բաղադրիչներից մեկը: Քանի որ քննություններն ու թվանշանները կարևորվում էին, ապա դպրոցները փորձում էին իրենց ջանքերը կենտրոնացնել թեստերի նախապատրաստման վրա: Տեսչության պետը հայտարարել է, որ այս համակարգը դպրոցների տնօրեններին, ուսուցիչներին և աշակերտներին դրել է սթրեսային վիճակում: Նրանք փորձել են ամեն ինչ անել լավ արդյունքներ ապահովելու համար:

Արդյունքում, դպրոցներում ուսուցման գործընթացը հիմնականում կենտրոնացել է թեստերին նախապատրաստվելու վրա: Այսուհետ տեսչությունը դպրոցների որակը գնահատելիս հաշվի է առնելու ոչ թե թվանշանները, այլ ուսուցման այն ձևերը, որոնք կիրառում են դպրոցները: Կարևորվելու է աշակերտների ուսուցանվող բովանդակության որակը:

Մեծ Բրիտանիայում իրականացված այս փոփոխությունը շատ կարևոր է Հայաստանի համար: Բանն այն է, որ ՀՀ ԿԳ նախարարու-

թյունը ցանկանում է դպրոցների ավարտական քննությունները դարձնել միասնական: Ընդ որում, այդ քննությունների արդյունքների համար դպրոցների տնօրենները, ուսուցիչները պետք է պատասխանատվություն կրեն: Եթե այս ամենն իրականանա, ապա կա շատ մեծ ռիսկ, որ ավարտական դասարան-



ներում ուսուցիչներն ու աշակերտներն անտեսելու են մնացած առարկաները և կենտրոնանալու են թեստերին նախապատրաստվելու վրա: Մի խնդիր, որն ըստ Մեծ Բրիտանիայի տեսչության պետի՝ արժանազորվել է իրենց երկրում:

Մյուս կարևոր փոփոխության մասին հայտարարեցին Սինգապուրում: Մի քանի տարի առաջ Սինգապուրն աշխարհում հայտնի էր որպես խիստ ակադեմիական կրթություն ունեցող երկիր: Այստեղ կարևորվում էին քննությունները, մրցակցությունը, սելեկցիոն կրթությունը: Բայց աստիճանաբար Սինգապու-

րում տեղի ունեցավ փոփոխություն կրթական քաղաքականության ոլորտում:

Օրինակ՝ վերջին տարիներին Սինգապուրում սկսեցին կարևորել ոչ միայն գիտելիքի ուսուցումը, այլև բնավորության ձևավորումը: Աստիճանաբար ներդրվեցին և ներդրվելու են ծրագրեր, որոնք նպատակ ունեն զարգացնելու աշակերտների անձնային որակները, որոշումներ կայացնելու հմտությունները: Արմատապես հիտվում է մասնագիտական կողմնորոշման համակարգը: Հայաստանի դպրոցներում մենք դեռ չենք հասցրել ներդրել մասնագիտական կողմնորոշման համակարգ, իսկ Սինգապուրն արդեն այդ համակարգն արդիականացնում է:

Սինգապուրի մասնագիտական կողմնորոշման ծրագրերում ներկայացվում են ոչ միայն մասնագիտություններ, այլև այնպիսի հմտություններ, որոնք, ըստ հետազոտությունների, առաջիկա տարիներին լինելու են պահանջված: Օրինակ՝ քննադատական մտածողություն, համալիր խնդիրների լուծում և այլն:

Անցած շաբաթ Սինգապուրի կրթության նախարարը հայտարարեց, որ ուսուցումը մրցակցություն չէ: Այդ նպատակով այսուհետ Սինգապուրի դպրոցներում աշակերտներին չեն համեմատելու միմյանց հետ: Աշակերտների առաջադիմության արդյունքները չեն համարյանցվելու: Մինչև այժմ հրապարակվում էին աշակերտների առաջադիմության տվյալները, որոնցում երևում էր, թե յուրաքանչյուր աշակերտ առաջադիմության որ մակարդա-

կում է: Հանվում են նաև 1-ին և 2-րդ դասարանների քննությունները: Թվանշանները կլուրացվելու են, ինչը նշանակում է, որ դրանց կարևորությունը նվազեցվելու է:

Շատ կարևոր է, որ Հայաստանում հետևենք նման զարգացումներին: Աշխարհի առաջատար երկրներից հետ մնալը մեզ տալիս է որոշ առավելություն: Մենք կարող ենք տեսնել, թե ինչպես են աշխատում նորամուծությունները այլ երկրներում, ինչ արդյունքներ են ստացվում, ինչ քայլեր են անում այդ երկրների կրթության պատասխանատուները: Այդ ամենը մեզ հնարավորություն է տալիս ուրիշների սխալների վրա սովորել և սխալ ուղղությամբ չզգալ:

Այս առումով վերջին տարիներին աշխարհի կրթական համակարգերում նկատվում է մի կարևոր միտում. քննությունների, թվանշանների դերը նվազեցվում է: Դպրոցները քննությունների միջոցով վերահսկելու մեխանիզմներից աշխարհի շատ երկրներ նահանջում են: Քննությունների վրա կենտրոնանալը բերում է կրթության գործընթացի նեղացման, անհիմաստ սթրեսների և սասանում է դպրոցների առանց այդ էլ վտանգված հեղինակությունը: Նոր կրթական համակարգերում ավելի շատ կարևորվում է գործնական հմտությունների ուսուցումը, բնավորության ձևավորումը, աշակերտներին հետաքրքրելու մեխանիզմները: Կրթական ծրագրերի, դասավանդման մոտեցումների բարելավումը շատ ավելի մեծ ազդեցություն կարող են ունենալ կրթության վրա, քան քննությունների խստացումը:

Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆ Կրթության հարցերով փորձագետ

168.am







ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ՝ ԱՃԻՄԱՐԿԻ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ



ցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե-դո ֆեդերացիայի և ՀԳՄՊՄԴ մարզիչ Արթուր ԱՌՈՒՇԱՆԻ հետ:

Նոյեմբերի 3-4-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում ընթացած կիոկուշինկայ կարատե-դոյի աշխարհի առաջնությանը մասնակցելու էին մեկնել արցախցի մարզիկներ Արթուր Առուշանյանը (18+ տ.կ., -65 ք.կ.) և Դավիթ Ավետիսյանը (16-17 տ.կ., -70 ք.կ.): Երիտասարդ մարզիկները հանդես են եկել 33 հավաքական թիմի կազմում, որը համալրում էր ես երկու մարզիկ՝ Եմիլ Ղազարյան և Կարայիս Կարապետյան՝ հավաքականի մարզիչ Սպարտակ Գասպարյանի գլխավորությամբ: Բոլոր մարզիկներն էլ կարողացան դրսևորել իրենց ուժերը, սակայն միայն Արթուրը կարողացավ եզրափակիչ փուլ անցնել և, 5 մեծամարտ ունենալով, նվաճել արծաթե մեդալ՝ զիջելով աշխարհի առաջնության չեմպիոնի տիտղոսը ճապոնացի մարզիկին:

- Արթուր, նշենք, որ փոքր-ինչ անսովոր է փոխչեմպիոնի Չեր կարգավիճակը՝ հաշվի առնելով Չեր բացարձակ հաղթանակները: Ինչո՞ւ եզրափակիչում չհաջողվեց հաղթել:

- Նախ նշենք, որ նախապատրաստվելու ժամանակ քիչ են ունեցել: Այս ընթացքում ավելի շատ զբաղվել են մեր ֆեդերացիայի զարգացման գործերով, պատանի մարզիկների ինտենսիվ պարապմունքներով: Մարզչիս՝ Սպարտակ Գասպարյանի հետ պարապելու ժամանակ քիչ էր: Սպարտակ Գասպարյանն աշխարհի առաջատար մարզիչներից է, նախագահում է 33 կիոկուշինկայ կարատե-դո ազգային ֆեդերացիան: Մարտավարությունը մշակել էինք, իսկ իրահանգներն ստանում էի կապի միջոցներով, աշխատում էի ինքնուրույն, միայն վերջին օրերին կարողացա պատրաստվել նրա մոտ: Եզրափակիչում բավականին ուժեղ մեծամարտ ունեցա ճապոնացի ուժեղագույն մարզիկի հետ: Մրցավարները երկար խորհրդակցեցին նախքան մրցանակաբաշխումը, չէին կողմնորոշվում՝ ում տային հաղթանակը, քանի որ երկուսս էլ հաղթողի կոչմանն էինք ձգտում: Լրացուցիչ ժամանակ նշանակեցին, պետք էր

շարունակել: Չեռքի վնասվածք էի ստացել, դա էլ իրեն զգացնել էր տալիս, չէի կարողանում լրիվ թափով աշխատեցնել: Շուրջ տասը րոպե տեսած մեծամարտից հետո հաղթանակը տրվեց մրցակցիս: Իհարկե, մենք մեղքի բաժին չենք բարդում մրցավարների վրա: Մեղքը մերն էր, արդեն վերլուծել ես աշխատում ենք թերությունների շտկման վրա: Պետք է այնպես աշխատել, որ հաջորդ մրցաշարի ժամանակ կասկածներ չլինեն մրցանակաբաշխության վերաբերյալ, ես հաղթանակը միանշանակ տրվի մեզ:

- Ի՞նչ տպավորությամբ էիք պայքարում, կպատմե՞ք Չեր հինգ մեծամարտի մասին:

- Մրցաշարը լավ էր կազմակերպված: Մասնակցում էր շուրջ 1000 մարզիկ: Հանդիսորեն գարմացած էի, որ Ղազախստանում շուրջ 100 երկրպագու ունեմ: Մեծամարտերի դադարների ժամանակ կասկածներ էին, նկարվում էինք, բաց չէին թողնում, քիչ էր մնում մեծամարտերից ուշանայի: Մասնակից դազախ մարզիկներից մեկն էլ խոստովանեց, որ շատ է համակրում ինձ որպես մարզիկի ես միշտ երազել է հետս մեծամարտել, ու ահա կատարվեց նրա երազանքը, մեծամարտեցինք:

Երկրորդ մեծամարտս ռուս մարզիկի հետ էր, սովորական պայքար էր, վստահ հաղթանակ տարա: Ընթացքում շփվում էինք տարբեր մարզիկների հետ: Քննարկում էինք կարատե մարտարվեստին վերաբերող հարցեր: Ամփոփում էինք, որ այն միայն ֆիզիկական պայքար չէ: Ինձ համար ուշագրավ էր մանկատնում մեծացած դազախ մարզիկի կերպարը, որը կարատեի նվիրված պարապմունքների միջոցով կարողացել է չհանձնվել կյանքի դժվարություններին: Ուրախալի էր, որ ինձ երկրպագող երեխաների մոտ ոգեւորություն առաջացրի, պատմեցին, որ ավելի լավ են դասերը սովորում: Հրավեր ստացա սեմինար-մարզումներ վարել Հնդկաստանում, Շրի Լակա-յում, Ուկրաինայում: Այս ամենը շատ հաճելի էր, բայց ահա 3-րդ մեծամարտս իմ թիմակից Կարայիս Կարապետյանի հետ էր: Այդպես դարձավ ըստ վիճակահանության, չնայած որ մեր քաշային կարգում 38 մարզիկ էր պայքարում: Տարիների փորձի ընթացքում սա առաջին դեպքն է, երբ ստիպված են խփել ընկերոջս աշխարհի առաջնությունում: Պայմանավորվեցինք իրար չզիջել և իրական կարատե ցույց տալ, թող հաղթի ուժեղագույնը: Չնայած որոշակի լարվածություն կար երկուսիս մոտ, այնուամենայնիվ հետաքրքիր մարտ ստացվեց: Բայց նաեւ անպակաս էին միմյանց ուղղված ժպիտներն ու զգուցանող հետ ձեռք մեկնելը: 4-րդ մեծամարտս դազախ մարզիկի հետ էր: Մեծամարտում էինք մշակված մարտավարությամբ, ուժեղ: 2-րդ ռաունդում միանշանակ հաղթանակ տարա: Այս դեպքում էլ վնասվածքներն էին անպակաս: Այդպես հասա եզրափակիչ, որտեղ պարտվեցի ճապոնացուն:

- Ի՞նչ կասե՞ք Դավիթ Ավետիսյանի մասին:

- Դավիթը հեռանկարային մարզիկ է: Մեր ֆեդերացիայի մարզիչ է: Այգեստանի մասնաճյուղում է պարապմունքներ անցկացնում: Նրա մարզած սաների մեջ արդեն 33 չեմպիոն ունենք: Ինքն էլ բազմիցս հանդես է եկել մրցաշարերում և զբաղեցրել մրցանակային տեղ: Կիոկուշինկայ կարատեի 18-21 տարեկանների միջև Վառնայի (Բուլղարիա) գավաթի խաղարկության ժամանակ Դավիթ Ավետիսյանը զբաղեցրել է 3-րդ տեղ: Աշխարհի առաջնությունում, թերեւս, նրա մոտ փորձի պակասությունը նկատվեց, որը սակայն ժամանակի ընթացքում կուղղվի: Փոքր-ինչ լարվածության պատճառով՝ դրսևորեց իր

կարողությունների ընդամենը 10 տոկոսը: Եթե օգտագործեր ընդունակությունների գունե կեսը, վստահ եմ, որ էլի մեղալ կունենայինք: Դավիթ Ավետիսյանի հետ մեծ ապագա ենք կապում: Նրա աշխատասիրությունն ու նպատակասլացությունը, որոնք կարատեիստի համար կարեւոր հատկություններ են, անպայման հաջողության կհասցնեն:

- Ընդհանրապես, ի՞նչ խորհուրդ կտայիք մարզիկներին, որոնք ցանկանում են չեմպիոն դառնալ:

- Համառ եւ քրտնաջան աշխատանք, նպատակասլացություն, ինքնաքննադատական վերաբերմունք. սրանք օգնում են հաջողության հասնել: Մարդու բնական տվյալները կազմում են հաջողության հասնելու գործընթացի ընդամենը 1 տոկոսը, մնացած 99 տոկոսը ձեռք է բերվում աշխատասիրությամբ: Դա հեշտ չէ, բայց եւ՝ ոչ անհնար: Սովորաբար իմ օրինակն են բերում մեծ դեպքերում: Մանուկ հասակում շատ հիվանդություններ ունեի, կարելի էր ասել՝ ծնվել են հիվանդությունների շարանով: Ընտանիքս ունեւոր չէր, որպեսզի կարողանար հոգալ բոլոր կարիքներս: Կիոկուշին կարատեի պարապմունքներում կոփվեցի: Իմ մանկության շրջանում Արցախում դեռեւս զարգացած չէին մարտարվեստները, չկար գաղափարապես զարգացած մարզական կազմ, ամենուր խոչընդոտների էի հանդիպում առաջ գնալու համար: Բայց լավ յուրացրի ամենակարեւոր դասը. չպետք է նահանջել, այլ առաջ գնալ, թեկուզ գետինը կրծելով: Խորհուրդ են տալիս լինել աննահանջ, կոփել մարմինն ու միտքը:

- Առաջիկայում ի՞նչ մրցաշարերի եք պատրաստվում մասնակցել:

- Պատրաստվում ենք մասնակցել դեկտեմբերի 6-10-ը Բուլղարիայում կայանալիք կիոկուշինկայ կարատեի աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին: Աշխարհի առաջնությունը կլինի պատանիների միջև: 33 հավաքականը կմեկնի 18 հոգուց բաղկացած կազմով, որից 8-ը Արցախից են: Եվրոպայի առաջնությունը կանցկացվի 18 եւ բարձր տարիքի մարզիկների միջև: Արցախից կմասնակցեն ես: Սկսված են նախապատրաստական պարապմունքները: Կաշխատենք ուսկիներ նվաճել:

- Ցանկանում ե՞ք հաջողություն եւ հետեւում դեպքերի ընթացքին:

Սուրյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԻ ՃԻ ԲՈՒՄ ԲԻՆՈՒՄ ԲԻՆՈՒՄ ԲԻՆՈՒՄ

Հոգևոր

Աշխարհ գալու գեղեցիկ սկիզբը, որն ազդարարվում է մանկան ճիշով, իր մեջ խորհուրդներ է պարունակում: Այդպիսի մի մեծագույն խորհուրդ է մեր հոգևոր ծնունդը, որը կոչվում է մկրտություն: Այն մեծ իրադարձություն է մարդու կյանքում, որի միջոցով մկրտվողը դառնում է Հիսուս Քրիստոսի հետևորդը: Մկրտության օրինակը տվել է հենց ինքը՝ Քրիստոսը: Նրա մկրտությունը մի բարձրադոկանջ հրահանգ է, որը մեզ պարտավորեցնում է սրբորեն մոտենալ այդ վեհ խորհրդին:

Մկրտությամբ մարդը նորոգվում է, վերածնվում և մաքրվում աղանձական (սկզբնական) մեղքից. այն մեղքից, որն առաջացավ Ադամի անհնազանդության պատճառով, և որին ժառանգորդ դարձավ ամբողջ մարդկությունը: Աստծո պատվիրանի նկատմամբ անհնազանդությունը պատճառ դարձավ, որպեսզի Ադամը գրկվի դրախտային կյանքից՝ իր շնորհական վիճակից, դառնա մահկանացու և ապրի Դրախտից դուրս: Այդ անհնազանդությունը պատճառ առաջացրեց մարդու և Աստծո, ինչպես նաև՝ հոգու և մարմնի միջև, որով և մարդու բնությունը շնորհագրվվեց:

Մարդուն այս անկյալ վիճակից բարձրացնելու համար Աստված Ինքը ձեռք մեկնեց Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Քրիստոսն իր քարոզչությամբ, քավչական մահով, հա-



րությամբ և մկրտության սուրբ խորհրդի միջոցով մարդուն ազատեց աղանձական մեղքից: Հետևաբար, ոչ միայն անհրաժեշտ է մկրտվել, այլև կարևոր է հասկանալ, թե ինչ է նշանակում մկրտությունը: Մկրտությամբ մարդը դառնում է Աստծու որդեգիր և Քրիստոսի եկեղեցու անդամ:

Մաքրվելով սկզբնական մեղքից և ծնվելով հոգևոր ծնունդով՝ նա դառնում է երկնքի արքայության ժառանգորդ՝ վերստին ստանալով աստվածային այն պատկերը, որ ուներ դրախտում մինչ մեղսագործությունը: Մկրտությամբ մեռնում է հին մարդը, և ծնվում նորը: Այդ պատճառով էլ մկրտված մարդը պետք է հեռանա իր կյանքի նախկին անհավատ ընթացքից և քայլի աստվածային արդարության ու ճշմարտության ճանապարհով:

Նոյեմբեր ամսում Ասկերանի շրջանի Ջրաղացների համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ Սուրբ մկրտության արարողություն: Նախաձեռնությունը Ջրաղացների միջնակարգ դպրոցի տնօրեն Լիանա Գրիգորյանինն էր, որը երկու տարի առաջ մկրտվելով՝ փափագել է իր աշակերտներին և մկրտված տեսնել:

Մկրտության արարողությունը Ջրաղացներում անցավ երկու փուլով. նոյեմբերի 3-ին և 10-ին: Առաջինը ցանկություն հայտնեց մկրտվել համայնքի ղեկավար Արսեն Հայրապետովը, և նրա անձնական օրինակին հետևեցին 46 համագյուղացիներ, որոնց մեջ կան տարբեր տարիքի մարդիկ: Ասկերանի շրջանի հոգևոր հովիվ տեր Մեսրոպ քահանա Խունդյանը Մկրտության

խորհուրդը կատարեց Սուրբ Երրորդության անունով, և այդ պահին անջնջելի փոփոխություններ տեղի ունեցան մկրտվողների կյանքում. նրանք ազատվեցին աղանձական մեղքից:

Դպրոցի տնօրեն Լիանա Գրիգորյանը, ողջունելով մկրտության կարևոր արարողությունը, ուրախությամբ նշեց, որ տարիներ հետո նորից վերածնվեց գյուղի եկեղեցին. «Հույս ունենք, որ վերջապես մեր եկեղեցին կժառայի իր նպատակին և Աստծո օգնությամբ կզտնվեն բարի մարդիկ, որոնք կօգնեն վերանորոգելու այն: Այս պահին եկեղեցում ստեղծված են պայմաններ, որպեսզի եկեղեցի այցելող մեր հավատացյալ ժողովուրդը կարողանա մոռ վառել և իր խոսքն ուղղել առ Աստված»...

Հիրավի, Ջրաղացների համայնքի կյանքում տեղի ունեցավ մեծ իրադարձություն: Մկրտություն ստացած ջրաղացեցիները լցվեցին մեծ հավատով, հույսով և գիտակցելով մկրտության վեհ խորհուրդը՝ կաշխատեն սրբությամբ պահել նրա սուրբ պարզությունը:

Կարինե ԲԱՆԵԻՅԱՆ  
Ջրաղացների Աշուր Մելիք-Շահնազարյանի անվան հիմնական դպրոց

Ի ՀԻՇԱՏԱԿ

ՆԱ ԱՄԵՆ ԻՆՉՈՎ ԲՆԱԿԱՆ ԷՐ...



Խոր ցավով տեղեկացանք, որ մահացել է անվանի մանկավարժ, կենսաբան ժողովրդագրագետ Մանկավարժական գործունեությունը սկսելով Նախիջևանի հայկական դպրոցներում՝ այն շարունակել է ԼԴԻՄ մի շարք կրթօջախներում, այնուհետև երեք տասնամյակ ղեկավարել Ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի կենսաբանության կաբինետը: Նրա ջանքերով կարճ ժամանակում մարզի բոլոր դպրոցներն անցան ուսուցման կաբինետային համակարգին, ինչը մեծ դեր կատարեց կենսաբանության դասավանդման որակը բարձրացնելու գործում:

Հնուտ կենսաբանը լավ գիտեր բնության լեզուն և շարժվում էր նրա օրենքներով՝ մույնը խորհուրդ տալով բոլորին: Թռչակի անցնելուց հետո էլ վաս-

տակաշատ մանկավարժը շարունակել է ակտիվ գործունեությունը: Նա մամուլի էջերում բարոգում էր կենսաբանական գիտելիքները: Գրում էր բնությունից ճիշտ օգտվելու, ճիշտ սնվելու, աշխատանքի և հանգստի ռեժիմը պահելու, վնասակար սովորությունները թողնելու, օրգանիզմի դիմադրողականությունը բարձր պահելու, մի խոսքով՝ առողջ ապրելակերպ ունենալու և այլ կարևոր բեմաների մասին: Հեղինակել է մի շարք գրքեր այդ և այլ բեմաներով: Հաճախ էր այցելում «Լուսարար»-ի խմբագրություն: Կենսալից էր, միշտ գոհունակության զգացումով, հետաքրքիր գրուցակից էր: Նրան խորթ էին առողջական խնդիրները: Նրան նայելով՝ հավատում էիր, որ բնությունը մարդուն

երկար կյանք է շնորհել, եթե շարժվի իր օրենքներով: Երբ այդ մասին նրա կարծիքն էինք ուզում իմանալ, հաստատում էր, բայց և ասում. «Տանձր երբ հասնում է, կաթոկ է տալիս»: 84-ամյա կենսաբանը դա էլ ապացուցեց. կանգնած տեղը հանկարծ ընկավ ու...

Մեղքի զգացում ունենք, որ կենդանությանը օրոք չտպագրվեց հողվածը, որին սպասում էիր, հարգարժան ժողովրդագրագետ: Հանգիչի խաղաղությանը հայրենի հողում: Դու չես մոռացվի: Քեզ ճանաչողների սրտերում խոր հետք ես թողել: Իսկ սերունդները Քեզ կհիշեն Քո գրածներով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԾՃՔՉՂՕՈՒ ԵՍԻՆՈՒՄ, ՕՐԻ ԿՈՒՄՄՈՒՆԻՏՄԵՆՏ

Կարտոֆիլը մարդու սննդի երկրորդ ամենակարևոր մշակովի բույսն է ցորենից հետո, ամենատարածված և ամենաշատ օգտագործվող բանջարանոցային բույսը: Նրա պատմությունը, սակայն, որպես սննդամթերք, շատ դրամատիկական է:

Կարտոֆիլը հայտնագործել է իսպանացի Պեդրո դե Լեոն: 1524թ. 13-ամյա դե Լեոն նավով ճանապարհորդություն է կատարում Հարավային Ամերիկայում՝ տեղական բուսական աշխարհը (Ֆլորան) ուսումնասիրելու նպատակով: 1598թ. Կոլումբիայում Լեոն հայտնաբերում է մի վայրի բույս, որի ստորգետնյա պալարները տեղացիները ուտում էին: Արշավախմբի շատ անդամներ հայտնաբերած բույսի մասին հայրենիք ուղարկած նամակներում տարբեր կարծիքներ են գրել. «Պալարները համեղ են, սունկի համ ունեն, լավացնում են կերակուրների համը և այլն»: Իսկ դե Լեոն նամակում ավելի ճիշտ է նկարագրում իր հայտնաբերած բույսը. «Պալարները եփելուց փափկում են, առանց կեղևի ավելի համեղ են, քաղձածությունը մյուս բույսերից ավելի լավ է հագեցնում»:

Սակայն իսպանացիներին դուր չեկավ Հարավային Ամերիկայից բերած կարտոֆիլը, բայց ահա, իտալացիներին դուր եկավ կարտոֆիլը, որը բերել էին Իտալիայից: Իտալացիները գլխավորապես հրապուրվեցին կարտոֆիլի համով: Իտալիայից էլ կարտոֆիլը տեղափոխվեց Բելգիա, բայց ոչ որպես սննդային բույս, այլ որպես հագվազուտ գեղեցիկ ծաղիկ՝ բուսաբանական այգու անկյունիկում:

Կարտոֆիլն աստիճանաբար տարածվեց Եվրոպայում: Այն սկսեցին աճեցնել Ավստրիայում, Գերմանիայում, Անգլիայում, սակայն բույսի սննդային նշանակությունը 16-17-րդ դարերում Արևմտյան Եվրոպայում չկար, մարդիկ աճեցնում էին որպես գույնզգույն ծաղիկներ ունեցող, ուրիշ աշխարհամասից բերած բույս: Առաջին Եվրոպացին, որ գնահատեց կարտոֆիլի սննդային արժեքը, ֆրանսիական թագավորական պալատի ղեկավար Պարմանտեն էր: Նա կարտոֆիլի մասին գրեց հատուկ մեմորանդում, որում ասում է. «Երկրագնդի ցամաքի և ջրի մակերևույթը ծածկող բազմաթիվ բույսերի մեջ չկա և չի էլ կարող լինել մեկ ուրիշը, որ այդքան մեծ իրավունքով արժանի լիներ քաղաքացիների ուշադրությանն այնպես, ինչպես կարտոֆիլն է»: Պարմանտեն ստիպված է եղել կազմակերպել կարտոֆիլով ճաշ, որին հրավիրել էր հասարակական գործիչների, գյուղատնտեսների, գիտնականների, որոնց մեջ էր նաև խոշոր քիմիկոս Լաուագեն՝ նոր ուտելիք բույսը պրոպագանդելու համար: Սակայն հնարամիտ ղեկավարի այս նախաձեռնությունն էլ արդյունք չտվեց. գյուղատնտեսները կարծում էին, որ կարտոֆիլը ոչ միայն վնասակար է մարդու համար, այլ նաև՝ թունավոր: Այդպես էլ կարտոֆիլը 17-րդ դարի Ֆրանսիայում չգտավ իր տեղը որպես անփոխարինելի

սննդամթերք: Պարմանտեի կենդանության օրոք: Նրա մահից քիչ անց Ֆրանսիայում ղեկավարող երկու հուշարձան կանգնեցրին. մեկն իր ծննդավայր Մոնդիդում, մյուսը՝ Փարիզի արվարձաններից մեկում, որտեղ ղեկավարած առաջին անգամ կարտոֆիլ է աճեցրել:

Առաջին արձանի վրա գրված է Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 16-րդի բառերը. «Հավատացե՛ք ինձ, կգա ժամանակ, երբ Ֆրանսիան շնորհակալություն կհայտնի Ձեզ նրա համար, որ Դուք քաղցած մարդկությանը հաց եք տվել...»:

Իրոք, այդպես էլ եղավ: Ֆրանսիայի ֆինանսների նախարար Տյուրգոն խորամանկ մեթոդներով գյուղացիների հոգեբանության մեջ դրական փոփոխություններ առաջացրեց կարտոֆիլի նկատմամբ (արդեն լուրեր էին տարածվել, որ կարտոֆիլի պալարները բուսակեր են): Նրա հրամանով պետական միջոցներով կարտոֆիլ ցանեցին: Երբ բույսի քիչերը սկսեցին ծաղկել, կարտոֆիլի դաշտերում վերահսկող զինված պահակներ նշանակեցին: Դա՛ր գյուղացիների մոտ հետաքրքրություն առաջացրեց: «Երևում է՝ սատանայական պտուղները պետության համար մեծ արժեք են ներկայացնում», - այսպես կարող են մտածել գյուղացիները: Դրանից հետո գիշերը պահակներին հանում են: Գյուղացիները, տեսնելով, որ պահակներ չկան, ծածուկ քանդում-հանում են պալարները և ցանում-տնկում են իրենց դաշտերում: Աճեցրած պալարները համեղ էին, լավ հագեցնում էին քաղցածությունը, բարձր բերք տալիս, նրանով կարելի էր մեծ գումարներ վաստակել:

Այսպիսի դժվար ճանապարհով է կարտոֆիլը մտել Ֆրանսիա: Խոչընդոտներ են եղել նաև կարտոֆիլը Ռուսաստան բերելու և աճեցնելու ժամանակ, որովհետև այնտեղ էլ էին լսել կարտոֆիլի թունավոր լինելու մասին:

Պետրոս Առաջինը մեծ հետաքրքրություն է ունեցել կարտոֆիլը Ռուսաստան բերելու ուղղությամբ: Նա գնացել է Հարավային Ամերիկա, համետեսել կարտոֆիլ: Պալարների համը ցարին դուր է եկել, և նա մի պարկ պալարներ է իր հետ բերում Ռուսաստան: Գյուղացիներին մեծ օգնություն է ցույց տվել Եկատերինա Երկրորդը կարտոֆիլը ցանելու և ողջ Ռուսաստանում տարածելու հարցում: 1765թ. սովը և աղքատությունը Ռուսաստանում ահագին պակասել էին՝ կարտոֆիլի ցանքատարածություններն ամբողջ երկրում շեշտակիորեն մեծացնելուց հետո:

Կարտոֆիլը Հայաստան և Արցախ է եկել ու՛շ՝ 1830-ական թվականներին: Երկու երկրում էլ կարտոֆիլը բարձր բերք է տալիս, քանի որ մեր միջին և բարձր լեռնային գոտիներում կլիման բավարարում է կարտոֆիլի պահանջներին: Կարտոֆիլը լավ է պալարներ գոյացնում, երբ ջերմաստիճանը 16-18 աստիճան է: Կարտոֆիլը սննդի մեջ

օգտագործում են մոտ 10 ձևով խոհարարական մշակման ենթարկելով (ավելացնում են կերակուրների մեջ, խաշում են կեղևով և կեղևները հեռացնելուց հետո, տապակում են, խորովում և այլն): Կենսաբանական ակտիվ նյութերի կորուստը տարբեր ձևերի մեջ տարբեր է, ավելի օգտակար է կեղևով եփելը: Կարտոֆիլի օգտագործման ամենաօգտակար ձևը խորովելն է, Ը վիտամինը շատ քիչ է քայքայվում, ավելի համեղ է:

Արցախցիները կարտոֆիլի խոհարարական մշակման գործում էլ փայլեցին իրենց հատուկ նորարարական հատկությամբ: Կարտոֆիլի երկու կողմերում ոչ մեծ կտրվածք են անում, այդ տեղերով պալարները մտցնում են շամփուրների մեջ՝ յուրաքանչյուր պալարից հետո մտցնում են նաև փոքր կտոր խոզի սալ: Խորովելու ընթացքում սալը դանդաղ հալում և ներծծվում է կարտոֆիլի մեջ: Արցախյան ձևով խորոված կարտոֆիլն ավելի համեղ է, կալորիականությունը էլ՝ 30-40% բարձր. օգտակար նյութերի ամենաքիչ կորուստն այստեղ է լինում:

Կարտոֆիլի միայն սննդային արժեքը չէ բարձր, բարձր է նաև բուժիչ հատկությունը: Դա նրա հարուստ բաղադրության շնորհիվ է: Նրա պալարները պարունակում են սպիտակուցներ, պեկտիններ, ֆերմենտներ, օրգանական թթուներ (խնձորաթթու, լիմոնաթթու և այլն), վիտամիններ (C, E, K, B1, B2, B6, PP) կարոտին (որ հետո դառնում Ա վիտամին), օսլա, կալիումի, կալցիումի, երկաթի, ֆոսֆորի աղեր: Կարտոֆիլը լավ միզամուղ է, նա օգտակար է երկկամների հիվանդությունների համար: Առանձնապես օգտակար է ստամոքսաղիքային հիվանդությունների բուժման ժամանակ: Թարմ կարտոֆիլի հյութը երաշխավորվում է խմել ստամոքսի խոցի դեպքում, հիպերտոնիկ հիվանդության ժամանակ, բուժում է արգանդի հիվանդությունները: Անհրաժեշտ են համարում ընթերցողներին ծանոթացնել կարտոֆիլը ժողովրդական բժշկության մեջ օգտագործելու մի քանի դրույթների հետ:

1. Հուն կարտոֆիլից պատրաստած պյուրեն վերացնում է ուռուցքները, եթե օրը երեք անգամ դա դնեք օրգանիզմի ուռած տեղերի վրա:

2. Թարմ կարտոֆիլից քամած հյութն օգտագործում են օրը 2-3 անգամ, կես բաժակ, ուտելուց կես ժամ առաջ բարձր թթվայնությամբ գաստրիտի (ստամոքսի պատերի բորբոքում) և ստամոքսի ու 12-մատնյա աղիքի խոցերի դեպքում:

3. Պարզվել է, որ կարտոֆիլի հյութը քչացնում է ստամոքսի պատերից թթվի արտադրությունը, թուլացնում է ցավը, սպիացնում մարսողական խողովակի խոցերը: Բացի այդ, կարտոֆիլի հյութը թուլացնում է մարսողության խողովակի ներսի միջավայրը և վերացնում փորկապությունը, որն առաջացել է հիվանդների մոտ գաստրիտի և խոցի պատճառով: Կարտոֆիլի հյութը լավ է վերացնում այրուցքները (изжога),

գլոտոցները, կարգավորում է մարսողությունը:

4. Արդեն բժշկական գիտությունը հաստատել է, որ կարտոֆիլի հյութը քչացնում է շաքարի պարունակությունը արյան մեջ: Շաքարախտի սկզբնական փուլում հյութն օգտագործելիս հիվանդությունը բուժվում է:

5. Քերիչով անցկացրած հուն կարտոֆիլի զանգվածն այրվածքների, էկզեմայի բուժման ամենալավ միջոցն է:

6. Կարտոֆիլի, գազարի, վարունգի և ճակնդեղի հյութերի խառնուրդն օրգանիզմը մաքրելու ամենալավ միջոցն է: Ամեն օր այդ հյութից 500 մլ խմում են, և կարճ ժամանակամիջոցում լավ արդյունք է ստացվում, եթե օրաբաժնում չեն օգտագործում միս և ձուկ:

7. Հուն կարտոֆիլից մատի հաստությամբ կտրած մոմիկն օգտագործում են թուրքի ժամանակ և լավ արդյունք ստանում: Այսպիսով, կարտոֆիլը, լինելով աշխարհի ամենատարածված բանջարեղենը, նաև սննդային, բուժիչ և տեխնիկական բազա է, նրանից ստանում են օսլա, սպիրտ, անասնակեր և այլն:

Հողվածս վերջացնում են՝ մի կարևոր հարցի վրա հրավիրելով ընթերցողների ուշադրությունը:

Միայն է, երբ մենք ուտում ենք, երբ ստացվում է, ինչ պատահում է, ինչքան ուտելիք լինում է: Պետ է մոտավորապես պահպանել օրվա ուտելիքների քանակը՝ բաժանելով երեք ոչ հավասար մասերի. ճաշին ուտել մի քիչ ավելի շատ, քան առավոտյան նախաճաշին, երեկոյան ընթրիքին էլ ուտել ավելի քիչ, քան նախաճաշին: Հասունացած, առողջ մարդու օրգանիզմի նյութափոխանակության բոլոր պրոցեսները նորմալ կատարվելու, օրգանիզմի դիմադրողականությունը (իմունիտետը) բարձր լինելու համար երաշխավորվում է մեկ օրում օգտագործելի. հաց՝ մոտավորապես 330գ, մակարոն՝ 15գ, ձավար՝ 25գ, լոբազգիներ՝ 5գ, կարտոֆիլ՝ 265գ, բանջարեղեն՝ 450գ (որից 100գ կաղամբ), պտուղներ և հատապտուղներ՝ 220գ (որից կեղև՝ խնձոր), շաքար և հրուշակեղեն՝ 100գ, բուսական յուղ՝ 36գ, միս (և մսից պատրաստած կերակուրներ)՝ 192գ, ձուկ և նրանից պատրաստած կերակուրներ՝ 50գ, կաթ և կաթնամթերքներ՝ 986գ, (500գ կաթ), ձու՝ 3 օրում 2 հատ: Գրածից երևում է, որ մեկ օրում ամենաշատ օգտագործում ենք հացը, երկրորդ տեղը գրավում է կարտոֆիլը, դրա համար էլ բոլոր ժողովուրդները կարտոֆիլն անվանում են երկրորդ հաց: Հիշենք, մեկ օրում օգտագործած վերը նշված սննդամթերքներից մարդու օրգանիզմը ստանում է 2800 կկալ էներգիա: Կարտոֆիլի բուժիչ օրապարենի մեջ այն կազմում է 220 կկալ: Հասունացած մարդու մեկ տարում օգտագործած կարտոֆիլը մոտավորապես 97կգ է:

Ժողովուրդային Կենսաբան



ԳՐԱԿԱՆ ԷՋ

Չոյա ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Մոռացել եմ տարիքը իմ  
Քոնը՝ երբեք:  
Դու իմ տան սյուն, իմ օրորոց  
Հայացքս տաք, գգվանք ու սեր՝  
Հառած մոմին արտասովաթոր...  
Իմ հայրենիք, իմ պատմություն,  
Մոմաթերթը ես քո բախտի,  
Դու իմ կյանքի մեղրահացը...  
Խաբկանքներից փրկված վաղը եմ,  
Դու՝ իմ հողը արյամբ շաղախ...  
Քանի անգամ խաչեցինք քեզ,  
Խաչքարվեցի քանի անգամ,  
Որ շքերթով հայաբարբառ՝  
Երթի տանեմ դրոշը քո:  
Մամուռներիդ խտության մեջ  
Հարություն կա հին դարերի,  
Խոհերիս խոր բերկրության մեջ՝  
Խոնջանք օրհնված մեր պատերից...  
Թե ինձ հանկարծ տան քարերին,  
Արյամբ օծվի քար ու մամուռ,  
Տաք արյունս կկանաչի՝  
Երգ կդառնա արևահուր:  
Իմ հայրենիք Արցախ աշխարհ  
Իմ սրտի ջերմ, հորդ տրոփյուն,  
Լուսաբացիդ շողը հասնի  
Բիբլիական Արարատին...

\*\*\*

Համաճարեղ Բեթովեն կամ Գյոթե  
Չեմ ծնվել կամ «Նարեկ» արարել,  
Արյունս սերել է հասարակ  
Հովվի մի համեստ օջախում:

Սàð´²Û²êî´°ÔÌ àôÁÛàôÛÛ´°ð

Օրերը թողել եմ իմ հոգում  
Սեպագիր քանդակներ խորանի...  
Եվ խիղճս անժանգ է մնացել  
Կիսավեր, ցավատանջ իմ սրտում...  
Ես չունեմ մեծ վաստակ, փառք ու գահ,  
Ոչ հմայք արտաքին, ոչ պճնանք,  
Իմ հոգին՝ ոնց անմար մի կրակ  
Վառվում է քո սիրով, հայրենիք:  
Խարսխված հավատին իմ անդավ  
Հույսս միշտ տեճազող Մասիսին,  
Եվ իմ մեջ ցնճության մեծ ոգին՝  
Հավիտյան պատրաստ եմ քո կանչին...  
Լեզուս մեկ, բայց ունեմ քեզ համար  
Երգ ծնող հույզերի շատրվան,  
Դու՝ օջախ իմ հոգում հարազատ,  
Իմ քնար՝ խոխոջող ու անդավ...

\*\*\*

Գարունը եկավ, ծաղկեց ու գնաց,  
Ամառը եկավ, շոգ էր ասացինք,  
Աշունը եկավ ու գնաց դեղնած,  
Չմեռը եկավ, ցուրտ էր ու սառած...  
Իրար հաջորդող եղանակներ չորս,  
Մարդն էլ ասես թե մի լարախաղաց  
Վազքի մեջ քրտնած...  
Կյանքի ընթացքից անվերջ զարմացած,  
Այս կրկներգից հոգնած ու թմրած՝  
Կանգ առավ հանկարծ,  
Մտորեց, խորհեց,  
Այս ինչպե՞ս արագ տարիներն անցան...  
Ոչինչ չմնաց բոլորը հանկարծ  
Ափսոսանք դարձան

Եվ անհետացան...  
Գարունս գնաց...

ԵՐԳԸ

Երգը չգրվող, չծնվող վարկյաններից  
Ծնվող հավք է, որ ելուն է հոգու վանդակից  
Եվ պատռելով կաշկանդունի վարագույրը փակ,  
Ազատվում և ճովողում է՝ հավք է...  
Սերը անմյութեղեն, անմարմին, սակայն  
Կարոտի, սարսուռի և զգացմունքի ջերմ է՝  
Սեր է:  
Ցավը հարված է, վիշտ է և խավար,  
Անարև օր է, ստվեր է խոնավ...  
Սիրտը խոցող սուր է՝  
Ցավ է և ուրիշ ոչինչ...  
Փորձություն է, աղոթի,ր,  
Կյանքը պայքար է  
Խաղաղվի՛ր Տիրոջով և ապրի՛ր...

\*\*\*

Թեկուզ մի օր ապրեմ՝ մի օր,  
Խիղճս մաքուր մի օր ապրեմ,  
Թեկուզ մի երգ գրեմ՝ մի երգ,  
Հոգուց ծնվի երգն այդ միակ,  
Խորը զգամ գինն այդ օրվա,  
Լիճի երգս լի հույզերով,  
Սիրո ցավը սրտում նրա  
Չեմ ափսոսում, հավատացե՛ք,  
Կյանքն էլ մնան է մի օրվա...

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

²PaðÛÛ´²ðð²Êàðø

Ոչ մի տարի ես Արցախում այսքան հեքի-  
աթային աշուն չեմ տեսել, այսպիսի գույներ  
չեմ տեսել: Մազլոդ թուփը բարձրացել և  
փաթաթվել է լացող ուռենու: Թուփը հրաշեկ  
կարմիր է, իսկ ուռենին՝ գնդախառն կանաչ:  
Հեռվից գարնանցած նայում էի ծառին. կարմիր  
ուռենի չէի տեսել: Երբ մոտեցա և տեսա, թե  
ինչպես էին երկու գույները գրկախառնվել և  
ինչ հրաշք ներդաշնակություն էին կազմել՝  
ակամայից մտածեցի. ո՞վ է ասում, թե աշունը  
կյանքի մայրամուտ է: Այս գրկախառնությունը  
սիրո հրավառություն է, ի՞նչ վերջ: Մարդու  
կյանքը բնության կրկնությունն է, զգացմունք-  
ները չեն ծերանում, այլ ժամանակ առ ժամա-  
նակ հրավառվում են: Վերջերս մի իմաստուն  
միտք կարդացի՝ բոլորը ինչ արժանանում ծե-  
րության, այլ միայն՝ ընտրյալները: Կարելի է  
մտածել սրա շուրջ: Ամեն դեպքում ծերացողի  
համար միտքարանք է այն, իսկ աշունը, այն էլ  
Արցախի աշունը ծերության հերքումն է:  
Ով չի ուզում ծերանալ, եկեք Արցախ, վա-  
յելեք այս հրաշափառ գույները, քաղցրացած  
արևի ճառագայթների տակ տաքացրեք ձեր  
կարծրացած մկանները և կիսանոսրեր, որ  
մարդն անընդհատ վերածնվող բնության կրկ-  
նությունն է և երբեք, երբեք չի ծերանում:

\*\*\*

Այսօր նախարարության աշխատողներից  
մեկը, մի ջախել աղջիկ հարցրեց.  
- Ընկեր Այվազյան, կարո՞ղ է պատերազմ  
լինի:  
Նայեցի դեմքին, վախենում է, ուզում է, որ  
ասեմ՝ չէ, չի լինի: Թող այդպես լինի.  
- Չէ, չի լինի:  
- Հաստատ՝ սո - նորից է հարցնում:  
- Հաստատ, - ասում եմ ու դուրս գալիս:  
Ախր ոնց չի լինի է՛: Սա Ղարաբաղն է, Շիրազի  
կռվախնձորն է՝ առաջ մեծակ մեզ ու թուրքի  
համար, հիմա, չգիտեմ ինչու, նաև աշխարհի  
համար: Բայց ես էլ եմ այն աղջկա նման ու-  
զում, որ պատերազմ չլինի, զիջերը առանց  
վախենալու քնենք ու արթնանանք: Ուզում  
եմ, բայց...  
1994-ի ձմեռն է: Մեր տան առաջին հարկի  
մի փոքրիկ սենյակում քնած ենք ՀՀ վաստա-  
կավոր արտիստուհի Մաղլենա Ասրյանի հետ:  
Մաղլենան եկել է օգնելու մեր նորաստեղծ

ø²Ûð²ä²îàðøÛ´°ð

հանույթին, դե համ էլ իր երկիր-ծննդավայրն  
է: Քնած ենք, պայթյունի ծայն եմ լսում, ինձ  
համար արդեն սովորական է (ի միջի այլոց  
ասեմ՝ անբնական է և ոչ մարդկային, երբ  
մարդու համար սովորական է դառնում մահ-  
վան մոտիկությունը), հա, քնած եմ, բայց  
լսում եմ պայթյունի ծայրը. լսում եմ ու չլսելու  
տալիս, որ Մաղլենան չվախենա: Իսկ Մաղլե-  
նան արթնացել է ու ինձ է ծայն տալիս.  
- Ժամ, էս ի՞նչ էր:  
Իբր թե քնաթափախ ասում եմ.  
- Հեռվից է, քնի:  
Հաջորդում է մյուս պայթյունը.  
- Ժամ, ախր... ոնց որ քաղաքում է,- նորից  
Մաղլենան է:  
- Լսիր, մեր տեղն ապահով է, հանգիստ  
քնիր:  
- Գի՞շտ:  
- Հա, հա, քնիր:  
Ասում եմ ու մտածում՝ ապահովս ո՞րն է  
ինքնաթիռի ռումբի համար: Այս կնոջը բերել  
եմ, որ ի՞նչ, երեխեքին, ամուսնուն թողել եկել  
է: Բա որ մի բան լինի՞... Առավոտյան ելնում  
ենք, Մաղլենային ասում եմ՝ բավական է ինչ-  
քան օգնեցիր, արի քեզ ճանապարհեմ  
երևան, իսկ մտքումս ասում եմ՝ քանի պայ-  
թյունի ծայնին չես ընտելացել, ախր դա ոչ  
մարդկային է, դա բարբարոսություն է մարդու  
հանդեպ: Այս հիշողությունը գրում եմ գիշերը,  
ժամը երկուսն է, արթնացա պայթյունի ծայ-  
նից, այսինքն՝ ինձ թվաց, թե պայթյուն էր:  
Աստված տա՝ սխալվեմ: Արթնացա ու հիշեցի  
նախարարության աղջկա հարցը: Չէ, չի լինի,  
պատերազմ չի լինի, որովհետև ես այդպես եմ  
ուզում, այն աղջիկը այդպես է ուզում, դու  
այդպես ես ուզում, թուրքի հերն էլ անիծած,  
մյուս պատերազմ ուզողների էլ: Ախր դա ու-  
զելու բան չէ, էլի:Դե, հիմա արի, նորից քնի, էլ  
քնել կլինի՞...

\*\*\*

Վերջերս Ֆեյսբուքում հետաքրքիր ու  
դրական վերլուծություններ են հայտնվում  
կորչող հայկական հյուրասիրության, սուրճի  
և թեյի սեղանի առաջնահերթության մասին:  
Այս երևույթն ինձ էլ է անհանգստացրել միշտ,  
և հիմա ես ուզում եմ ձեզ հետ կիսվել:  
Ողորմածիկ մայրս դռնից անցնողներից  
անպայման համեցեք էր անում տուն՝ մի կտոր  
հաց ուտելու: Մեկ-մեկ նեղարտվում էի՝ ասե-

լով. «Ենթադրե՛ք այդ մարդը եկավ, ինչն՞վ ես  
հյուրասիրելու»: Ի՞նչ էր ասում մայրս.  
- Աղջիկս, հաց կա, պանիր կա, թթու կա,  
մնացածը պարտադիր չէ, կարևորը մարդուն  
հարգելն ու մարդու տեղ դնելն է:  
Ժամանակի ընթացքում փոխվեցին հյու-  
րասիրության ձևերը. հիմա լավագույն դեպ-  
քում սուրճ ու թեյ են հյուրասիրում: Այդ էլ շատ  
լավ է, եթե չկորչի: Հայ օջախը օջախ է իր տա-  
քությանը, եթե չկա այդ կրակը, չկա նաև հայ  
ընտանիքը, այսինքն՝ կա, բայց ոչ՝ հայկա-  
կան, այլ նորից լրդոված եվրոպական ժամա-  
նակակից «ընտանիք»:  
...1994 թվականի փետրվարն է՝ ցուրտ,  
սառնամանիք: Գնում եմ երաժշտական ու-  
սումնարան: Հանկարծ մեկը ծայն է տալիս:  
Շրջվում եմ, տղամարդ է: Մոտենում է և իմ  
զարմացած հայացքը տեսնելով՝ ասում է.  
- Չճանաչեցի՞ր, Գագոն եմ, Գյունրվա Գա-  
գոն:

Ազատամարտիկ էր, Շարժումից գիտեցիք  
իրար, բայց մորուք էր պահել և դարձել անճա-  
նաչելի: Մեր ջերմ գրույցից պարզվեց, որ հա-  
մերգային խումբ էր բերել Շուշիի գնդի հրա-  
մանատարի հրավերով, Բերձորի ճանապար-  
հը փակվել էր, և խումբը մնացել էր: Ստիպ-  
ված իջել էին քաղաք, որ մի տեղ տեղավորե-  
ին երեխաներին, այդ տեղն էլ չկար: Երեխա-  
ները մրսած էին, հիվանդ: Ես չվարել էի: Այն  
ժամանակ հյուրանոց չկար, ցուրտ ու մութ  
տարի էր:

Մտա ավտոբուս և վարորդին ասացի՝  
բշի՛ր: Բերեցի մեր տուն, ողորմածիկ սկեսուրս  
զարմացած նայում էր տուն մտնող երեխանե-  
րին, և երբ բացատրեցի, թե ովքեր են, անմի-  
ջապես անցավ իր մասնագիտական պարտա-  
կանության կատարմանը: Ջերմաշափղ վերց-  
րեց և սկսեց ստուգել երեխաներին: Հավաք-  
վեցինք հարևաններով, ընկերներով և չորս օր  
պահեցինք համույթին: Երբ ճանապարհները  
բացվեցին, հարազատների նման հրաժեշտ  
տվեցինք իրար, մի բան միայն կտորեց մեզ:  
Ճանապարհվելուց առաջ խումբը դուրս եկավ  
փողոց և ելույթ ունեցավ մարդկանց համար:  
Ահագին մարդ էր հավաքվել, զիլ հնչում էր  
զուռնան, և հանկարծ փողոց մտավ թաղման  
թափոք. զոհված ազատամարտիկ էր: Ջուր  
մաղվեց բոլորիս գլխին: Հյուրերիս համերգը  
կիսատ ճանապարհեցինք:  
Հիմա մեկի տուն տար վաթսուն հոգի և

ասա՛ մի քանի օր պահիր: Չէ, փոխվել են ժա-  
մանակները և հյուրասիրության ձևերը:

\*\*\*

Հարգելի՛ Ֆեյսբուք ջան:  
Ամեն անգամ, երբ կարդում եմ քո հարցը՝  
ի՞նչ եք մտածում այսօր, ծիծաղս գալիս է: Տո  
ասա՛ ի՞նչ չեք մտածում: Ախր մարդը ո՞նց կա-  
րող է մտածելու բան չունենա:  
Ողորմածիկ մերս կյանքի վերջին տարի-  
ներին անբնություն ուներ: Իմ հարցին, թե ինչ-  
պես է լուսացնում գիշերը՝ ասաց.  
- Վեցն եք, սկսում եմ մեծից, գալիս հաս-  
նում եմ քեզ, լուսանում է: Քոռանամ, ճիշտ են  
ասել՝ շուն լինես, գել լինես, տանը պուճուղը  
չլինես: Քեզ էլ առաջի բարի լուսս եմ ասում ու  
ելնում տեղիցս:  
Է՛հ, մեր ջան, հիմա ես երեք զավակ ունեմ,  
երեք էլ թոռ, էլի եղավ վեց: Ես էլ եմ եկել քո  
օրին՝ գիշերները չեմ քնում: Սկսում եմ մտա-  
ծել մեծից, բայց հասցնում եմ վեցերորդի մա-  
սին էլ մտածել: Ախր, դարը փոխվել է, մարդը  
արագ է մտածում: Ինձ ի՛նչ ժամանակ է մնում  
մտածել այլ բաների մասին: Օրինակ՝ մեր  
ազգի մասին, Արցախի մասին, Ջավախքի մա-  
սին: Դե, իմ գործը դժվար է: Ջավախքը ինձ  
ծնել է, Արցախը՝ սնել: Մեկը հայր է, մեկը՝  
մայր: Երկուսն էլ ցավ ունեն, երկուսն էլ վերք  
ունեն:

Բա Հայաստա՞նը: Ես էն երկուսի ձեռքե-  
րից բռնել եմ ու հայացքս հառել Հայաստա-  
նին:

Բժիշկը նա է, դեղը նրա ձեռքին է:  
Նա էլ դարձել է գնդակ մեծ երկիր կոչված-  
ների ձեռքին: Մեկը տալիս է մեկին, է՛ն մեկը  
մյուսին, բայց ի տարբերություն Ֆուտբոլի՝  
ժամանակը չի լրանում: Ես էլ համբերատար  
սպասում եմ, թե երբ է մեր «Հենրիկ Մխիթար-  
յանը» գնդակը ուղարկելու դարպաս: Սպա-  
սում եմ, ու ձեռքերս բաց չեն թողնում, չգի-  
տեմ՝ ե՞ս եմ իրենց ուժ տալիս, թե՞ իրենք ինձ:  
Եվ այդպես էլ գիշերներս անցնում եմ, ու  
ես հոգնած ձեռքերով դիմավորում եմ ոչ մի  
նոր բան չխոստացող առավոտին ու այս գորչ  
աշխարհին բարի լույս ասելով՝ վեր եմ կենում  
տեղիցս:

Բարի լույս նաև քեզ, Ֆեյսբուք ջան և  
շնորհակալ եմ, որ դու կաս: Թե չէ ո՞ւմ հետ  
պիտի սիրտս դատարկել:

<p><b>Հ Ա Ռ Մ Ա Ր Ա Ր</b> ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>Մեջբերումների և փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վա- րելու պարտավորություն չի ստանձնում:</p> <p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: <a href="http://www.lusarar.info">www.lusarar.info</a></p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄԴԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 23.11.2018թ.:</p>
-------------------------------------------------------------	-----------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: